




Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
նշ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

23452

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ ՄԻԱՑԵՔ:

ԿՕՄԵՐԻՏԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆ № 18.

Ս. ԿԱՊԼՈՒՆ

ՊԱՇՏՊԱՆԵՑԵՔ

ՅԵՐԵՒԱՆԵՐԻ

ԱՇԽԱՏԱՆՔԸ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Ո. Կ. Ե. Միություն Անդրկովկասի
Յերեւանի Կոմիտեի:

331.3

4-24



2633
38

17 MAY 2013

23452

15 JAN 2016

331.3
4-24

ար

ԱՌԱՋԱՐԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Այս գրքույկը գրված է վոչ թե կրթված ընթերցողի համար, այլ այն բանվորը, վորը քիչ է պատրաստված, և նույնիսկ նա, վոր վոչ մի կրթություն չի ստացել,—կարող է կարդալ այս գիրքը:

Պաշտպանելով փոքրահասակի ու անչափահասի աշխատանքը, մենք դրանով կռիվ ենք մղում նրա ապագայի համար: Դրանով մենք ձգտում ենք, վոր բանվորների գալիք սերունդը լինի ավելի առողջ, ավելի ուժեղ, զըվարթ և կայտառ, քան նրանց հայրերը, վորոնք մնվել են բուրժուազիայի գերիշխանություն տակ: Յեւ այդ պատճառով այս գրքույկի բովանդակության հետ պետք է ծանոթացնել բոլոր քիչ թե շատ գիտակից բանվորներին: Ոգտակար կը լինեւ, եթե այս գրքույկը բարձր կարգացվեւ բանվորական փոքրիկ շրջաններում, կամ գործարանների աշխատանքի պաշտպանության կոմիտեաների հատուկ ժողովներում:

Բայց յերեխաների աշխատանքի պաշտպանությունը Խորհրդային Ռուսաստանում հենվում է ամենից առաջ իր, աշխատավոր երիտասարդության գիտակցության, և դեպի իր գործը ցույց տված ակտիվ վերաբերմունքի վրա: Յեւ հենց այդ պատճառով ավելի ցանկալի է, վոր այս գրքույկը բարձր կարգացվեւ երիտասարդական միության ժողովներում և մանավանդ նրա գործարանային բճիճներում:

Ս. ԿԱՊԼՈՒՆ

Ժ. Տ. Գ. Խ. Պոլիգր. Բաժ. 4-րդ տպարան, Պուշկ. 3.

Տիրած 2000.

ՊԱՇՏՊԱՆԵՑԵՔ ՅԵՐԵՒԱՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Ամեն քիչ թե շատ գրագետ բանվոր, վորը նույնիսկ լրագիր ել չի կարդում, գիտե, վոր Խորհրդային Իշխանությունը առանձին ուշադրությամբ, առանձնակի, գրեթե մայրական սիրով ե վերաբերվում յերեխաներին առհասարակ, իսկ բանվորների յերեխաներին ու փոքրահասակ պրոլետարին ավելի: Այդ բանը բազմիցս ստիպված եյին վկայելու Ռուսաստան եկող արտասահմանի մամուլի ներկայացուցիչները, այն լրագիրների, վորոնք հրատարակվում են կապիտալիստների միջոցներով և վորոնք վոչինչ չեն խնայում բանվորագյուղացիական Ռուսաստանը ոտարադիրների առաջ արատավորելու և վարկաբեկելու համար: Յեւ այսօր ամբողջ աշխարհը գիտե արդեն, վոր «յերեխաները՝ կյանքի ծաղիկներն են» խոսքերը Խորհրդային Ռուսաստանում թղթի վրա չեն մնում, և վոր մենք անում ենք ամեն բան, վորպեսզի այդ «ծաղիկ-

ները» վորչափ հնարավոր ե ավելի լավ աճեն։ Մեր ապրած չորս ծանր տարիների ընթացքում, երբ ամբողջ աշխարհի շահագործողները, իրար հետ գաղտնի պայմաններ կապելով՝ տքնում եին ճնշել ռուս բանվորական հեղափոխությունը, յերբ նրանք Ռուսաստան չեին թողնում կարիք զգացվող ապրանքներից վոչ մի փութ, նույնիսկ իրենց գաղտնի գործակալների միջոցով փչացնում եյին մեր երկաթուղիները, ռուս հակահեղափոխականները—չայկովսկիները, դենիկինները կոչակները, յուզինիչները, վրանգելները և ուրիշները շատ անգամ զրկում եյին գրեթե մեր ամբողջ Կարմիր Հանրապետությունը հացից, ածուխից ու նավթից, այնուամենայնիւ, Սովետական Իշխանությունը, այդ քաղցի ու ցրտի որերին, վորպես մի գթոտ մայր, իր խղճուկ սեղանի ամենալավ պատառները հատկացնում եր իր յերեխաներին։ Յերբ բառիս բուն նշանակությամբ ամբողջ ազգաբնակչությունը կիսաքաղց որեր եր անցկացնում մեր պարենավորման մարմինները ամենալավ մթերքները հատկացնում եին յերեխաների ճաշարաններին, մանկական հաստատություններին, կամ ցրում հատուկ մանկական կարտոշկաներով։ Ամբողջ Ռուսաստանը ծածկվեց նոր ուսումնարանական հաստատությունների լայն ցանցով — դպրոցնե-

րով, ուսումնարանական դասընթացներով, ակումբներով, աշխատանքի արհեստանոցներով և այլն։ Իսկ անոթեփան ու ծայր աստիճանի չքավոր երեխաների համար կազմակերպվեցին բավականաչափ փակ հաստատություններ, ուր երեխաները ստանում եյին հագուստ, ուտելիք և ուսում։ Բացի այդ բոլորից, մեծ աշխատանք ե կատարվում կյանքի բազմատեսակ այլ ասպարեզներում, վորպես զի մեր պարծանք և հույս երեխաները, ապագայում լինեն հաղթանդամ, ուժեղ կամքի տեր, համարձակ և պատրաստ կյանքի հետ անողորմ կռիվ մղելու։ Այդ երեխաները պետք ե հարագատ լինեն ռուսաստանի բանվորությանը, վորը առաջինն եր ամբողջ աշխարհում, վոր տապալեց կալվածատերերի ու կապիտալիստի իշխանությունը և իր կոշտացած ձեռքերով սկսեց կերտել նոր կյանք, աշխատավոր ու անկախ։

Այդ բոլորի մասին տես Պ. Ռադինի բրոջուրը «Ինչ ե անում Խորհրդային Ռուսաստանը մանուկների առողջության պահպանման համար»։

1920 թվին ամբողջ Ռուսաստանում կազմակերպվեց «Մանկան Շաբաթներ» Խորհրդային Իշխանության առաջնակարգ ներկայացուցիչներից կազմված, գործում եր մի հատուկ հանձնաժողով՝ յերեխաների կյանքը բարելավելու համար։

Իր աշխատանքներն ամենքի առաջ ընդգծելու նպատակով, հանձնաժողովը գործում եր բանվորների և գյուղացիների պատգամավորների Համառուսական Կենդրոնական Գործադիր Կոմիտեին կից:

Յեւ արդեն պարզ, հասկանալի է, վոր Խորհրդային Իշխանութիւնը և բանվորութեան ավելի մոտ կազմակերպութիւնները — պրոֆմիութիւնները, վորոնք մեծ չափով զբաղված են լինում բարվոքելու բանվորական կյանքն ու նրա աշխատանքը, պետք է ամենալուրջ ուշադրութիւն դարձնեն և յերեխաների աշխատանքի խնդրին: Կյանքի ծանր պայմանները և կատարյալ անապահով դրութիւնը ստիպել են շատ անգամ բանվորին կամ աղքատ գյուղացուն, աշխատանքի տալու իր անչափահաս ու մատաղ յերեխային:

Դառնութեամբ ու սրտի խոր կսկիծով հայրըն ու մայրը գիտել են միշտ, թե ինչպէս իրենց փոքրիկ տղան վաղ առավոտվանից մինջև ուշ գիշեր տքնում է ծանր աշխատանքի տակ, գործարանի խեղդող մթնոլորդում:

Յեւ այդ բոլորի վարձաարութեան փոխարեն դեռ ապտակներ է ստանում բարկացած կոշկակար-սեփականատերերից. իր այն խոսքերի համար, վորոնք «գուր չեն գալիս» այդ քմահաճ

տիրոջը, կամ նրա կնոջը: Բայց վոչինչ չեր կարելի անել — դրամատերը տալիս էր բանվորին ափսոսալի, վոր ինքը միայնակ հնարավորութիւնից զուրկ եր դառնում պահելու իր ամբողջ ընտանիքը, և կարիքը հարկադրում եր նրան, զպրոցի փոխարեն, յերեխաներին աշխատանքի ուղարկելու:

Առանձնակի բազմաթիւ եին երեխաները գործարաններում ու ֆաբրիկաներում պատերազմի ընթացքում, երբ չափահաս բանվորները ուժգին ենթարկվում էին զորահավաքի, իսկ կյանքը ափսոսալի թանգանում եր, վոր վոչ մի բանվորական ընտանիք հնարավորութիւն չուներ ապրելու իր առաջվա սուղ միջոցներով:

Հացի, շաքարի, գետնախնձորի, վոտանամանի ու մյուս կենսական անհրաժեշտ պիտույքների գները միշտ բարձրանում էին աշխատավարձի նորմաներից: Այդ դրութիւնը շարունակվեց և պատերազմից հետո, ի հարկէ ընդհանուր լքման միջոցին, այդ պատճառով յերեխաների աշխատանքը գործարաններում, ֆաբրիկաներում ու մեծ հաստատութիւններում այսօր սովորական երևույթ է դարձել: Մեզանից շատերը ափսոսալի ընտելացել են արդեն կյանքի այդ պատկերներին, վոր առանձնակի աննորմալ չեն համարում այդ բոլորը: Բանվորներից շատերը բոլորովին չեն հասկանում անգամ այն բոլոր միջոցնե-

րի իմաստն ու նշանակութիւնը, վոր գործադրվում են երեխաների աշխատանքը պաշտպանելու համար:

Բանվորներէց շատերը չեն գիտակցում, թե ի՞նչ ազդեցութեան ունի այդ աշխատանքը յերեխայի մատաղ որգանիդմի վրա: Այդ պատճառով տեսնենք ի՞նչ եւ ասում այդ առիթով գիտութիւնը:

Մարդ ծնվում ե հոր ու մոր սերմերի խառնուրդից և այդ սերմերը առանձին-առանձին վերցրած, այնչափ փոքր են, վոր հասարակ աչքի համար անտեսանելի յեն և նրանց դիտելու համար պետք ե դիմել խոշորացույցի, վոր 200-300 անգամ մեծացնում ամեն մի իր: Ինչ ամսվա ընթացքում մոր արգանդում իր աճումի համար բոլոր հարկավոր հյութերը ընդունելով, սաղմը մեծանում ե մի քանի միլիոն անգամ և մոր արգանդից լույս աշխարհ գալու վայրկյանում, նա կշռում ե 7-8 ֆունտ: Այնուհետև մանկան աճումը ընթանում ե ավելի դանդաղ. և աճումը նորից ուժեղանում ե պատանի հասակում, տղան 14 տարեկանից, իսկ աղջիկը 13 տարեկանից սկսած: Մարդու մարմինը աճում ե իր ընդունած սնունդի հաշվին: Մեր մարմինը կարելի ե համեմատել առհասարակ մեքենայի հետ, վորի կոշումն ե վորեւ գոր-

ծողութիւն կատարել: Յեւ մեր ամբողջ կյանքը, վորջ աշխատանքն արտայայտվում ե շարժողութեամբ: Նույնիսկ մտավոր աշխատանքը. բժշկի, ագիտատորի, գրողի, ուսուցչի, կամ գիտնականի աշխատանքը անհնարին ե առանց խոսելու, գրելու և արտաքին ուրիշ գործողութիւնների: Ինչպես մեքենան բանեցնելու համար հակավոր ե վառել գոլորշի արտադրող կաթսան, կամ այրել վառվող նյութեր, այնպես ել ապրելու, կանք պաշտպանելու համար պետք ե ուտել, սնունդ ե պետք: Մեր որգանիդմի համար սնունդը կատարվում ե վառելանյութի դերը: Բայց մեքենայի ջերմութիւնը կանոնավորելու, և վառվելու պրոցեսը պահպանելու համար, ողի կարիք ե զգացվում: Եթե ողի ներմուծութիւնը դադարի, կամ պակասի, կրակը կարող ե հանգչել, և ջերմութեան պրոցեսը կը դադարի: Մեր սնունդն յեփելու, վառելու համար նույնպես հարկավոր ե անհրճառ թարմ ող: Այդ ե պատճառը, վոր մարդ շնչասպառ ե լինում բոլորովին փակված շինութեան մեջ և ինքն-իրեն շատ վատ ե զգում այնտեղ, ուր ողը, մարդկանց բազմութեան, անխաճիւրի և այլ պատճառներով փչացել ե: Այրումից հետո միշտ մնում են անպետք մնացորդներ՝ մեքենայի տաքացնելուց հետո ծուխ, մուր,

փոշի, իսկ մարդու մարմնում գոյանում են արտաթորվող արտադրություններ—մեզ, քրտինք։ Բայց չը նայելով այդչափ մեծ նմանության անշուշտ մեքենայի և մարդու միջև, նրանց մեջ կա և մեծ տարբերություն։ Առաջինը կատարվում է իրեն հատուկ գործողությունը, յերբ նորան բանացնում են։ Երբ մեքենան փչանում, կամ հնանում է, նրան դադարեցնում և նորոգում են հատուկ վարպետի ձեռքով։ Իսկ մարդու մարմինը, այդ բարդ ու գերբնականորեն ստեղծված մեքենան, ի հաշիվ սնունդի վոչ միայն գործում է, այլ և նորոգում իրեն և վերականգնում իր ներսում այն բոլոր մասերը, վորոնք աշխատանքի ժամանակ փչանում կամ վատնվում են։

Յերեխայի որդանիզմը, բացի նրանցից, կատարում է յեվ մի այլ մեծ աշխատանք—նա անընդհատ աճում է, ավելանալով իր հասակով և կշռով։ Ուրեմն բոլորին հասկանալի է, վոր եթե մի ծիծը ծծում են երկու մանուկներ, երկար ծրծող երեխան շատ քիչ բան է թողնում մյուսի համար։ Յեվ եթե կաթի քանակը առհասարակ քիչ է, այդ յերեխաներից մեկը մնում է միշտ զուրկ ու խեղճ։

Այդպես է և այս դեպքում։

Յերեխայի սնունդը պետք է բավարարի թե իր կատարած աշխատանքին և թե նյութ մա-

տակարարի իր մարմնի զարգացման համար։ Բայց վորովհետև բանվորության շրջանում սնունդը յերբեք առատ չի լինում, այդ պատճառով նորա կատարած աշխատանքը բացասորեն է անդրադառնում երեխայի աճման պրոցեսում ու առաջ է բերում աննորմալ պայմաններ։ Հենց սրանով է բացատրվում ինչպես այդ նկատած կը լինեն շատերը իրենց անձնական փորձից՝ այն երեխաները, վորոնք աշխատում են մատաղ հասակից, ավելի փոքրահասակ են լինում, քան նրանց վոչ աշխատող հասակակիցները։ Նրանք վոչ միայն հասակով ցածր են, այլ և պակաս են կշռում և առհասարակ իրենց տարիքից ավելի մատաղ են երևում։ Եվ վերջապի են 16 տարեկան դեռ տակավին երեխայական ժպիտով պատանիները և արդեն կանգնած գործարանի մեքենայի մոտ, մինչդեռ նրանց մյուս հասակակիցները այդ տարիքում սկսում են արդեն հասունանալ, ընդունելով հասուն մարդու կամ կնոջ ընդհանուր դժերը։ Այդ հանգամանքից ցարիզմի ժամանակ ոգտվում էին գործարանատերերը՝ պատշաճ որոնքները խախտելու համար գործարանում ընդունում էին փոքրահասակ յերեխաներ, վորոնք կեղծ անցադրեր էին ներկայնում, ձեռք բերելով այդ գովումենտները չարչի տիրացուներից ու գյուղի գրավաններից։

Յերեխայի որդանիզմի նորմալ զարգացման ու աճման համար, բացի բավարար հանգստից, պետք են և մի շարք առողջ կյանքի պայմաններ — առաջին հերթին լույս ու ոդ:

Հին ցեղերից շատերը երկրպագել են արեգակին, համարելով նրան կեանքի իմաստ, ու ճիշտ արտայայտվել է ժողովրդի ամենամեծ իմաստությունը: Առանց արեգակի ճառագայթների կենդանիների ու բույսերի շատ տեսակները չեն կարող աճել: Իսկ եթե բույսերի տեսակներին ել հաջողվում է աճեցնել մութ նկուղներում, նրանց ծիւրերը միշտ փոքր են լինում և թույլ, նրանք թառամում են որ առաջ և գուրկ են գունալից տեսքից ու գեղեցիկ գծերից: Նույնպես և յերեխաները, վորոնք միշտ գտնվում են կիսամութ գործարաններում, ուր բացակայում է ոդի բավարար պաշարը, ֆիզիքապես թույլ ու նիհար են լինում միշտ: Յեւ նրանց հոգին ել նույնպես անգույն, նույնքան թույլ է, ինչպես նկուղներում սնված ծաղիկը: Բացի այդ, լույսը ունի մի գերբնական ուժ ևս, նա անդամահատում, մեռցնում է իր սաղմում հիվանդությունը, միկրոբը: Շատերին հայտնի է, յերևի, թե ինչպես են բժշկում ծանր, ներքին հիվանդությունները, զանազան վերքեր ու վոսկրային հիվանդություններ ծովափյա արևի ճառա-

գայթներով: Բժշկության այդ միջոցը լեռների բարձր գագաթներում հայտնի է «արեգակային ողային վաննաներ» անունով: Այդ կենսունակ ճառագայթները, շատ խոր թափանցելով հիվանդ մարմինը մեռցնում են այնտեղ հիվանդացնող պարազիտներին և հիվանդաբնույթ տարրերը, այսպես հին ասածու — արեգակի հրամանով գուրս անելով այնտեղից խոր արմատներ ձգած ցավը: Այդ պատճառով այն երեխաները, վորոնք աշխատում են փակ շինություններում, նամանավանդ ավելի մութ տեղերում, միշտ ենթակա են բազմատեսակ հիվանդությունների (վարակիչ հիվանդություններ, խլացավ, թոքախտ և ուրիշներ): Այնուհետև, երեխայի առողջության համար շատ նշանավոր է մաքուր, առողջարար ոդը: Փակ սենյակները, ուր ոդը չի նորոգվում, ուր մթնոլորդը ծանր, խեղդիչ է, շատ վատ է անդրադառնում թույլ, չը զարգացած որդանիզմի վրա: Լավ, առողջ ոդը պետք է նրա համար, վորպեսզի մեր թոքերը, վորոնք գտնվում են կրծքի վանդակում կանոնավոր կատարեն իրենց կոչումը, ինչպես վոր բոցավառվող հուրը դարձնուցում առաջ է բերում կրակի պրոցեսը: Յեւ վորչափ վնասակար է ոդը, այնքան վատ են աշխատում մարդու թոքերը, այնչափ վատ են աճում ու զարգանում նրանք: Այդպիսի պայմաններում մարդ

հաճախ ենթարկվում ե իր կյանքի հետագա
ընթացքում ժողովրդի առողջության ամենակա-
տաղի թշնամու հարվածներին՝ թոքախտին:

Յերեխաները, վորոնք շատ քիչ են լինում թա-
րմ ոդում, բացի այդ, միշտ զարմացնում են մեզ
իրանց նիհար, գունատ տեսքով, թուլակազմու-
թյամբ ու լղարությամբ: Նրանց մեծամասնու-
թյունը տառապում ե արյան պակասությունից,
մի հիվանդություն, վորն ավելի նպատակահա-
մար կրլինեք անվանել «վատարյունություն»,
վորովհետեւ արյունը այդ դեպքերում վոչ այն-
չափ կարմիր ե, վոչ այնչափ թանձր ե, հետե-
վապես, ավելի վատ ե մնվում մարմինը, որգա-
նիզմը: Մատաղ հասակից աշխատանքը ֆաբ-
րիկայում ու գործարանում կլանում ե յերե-
խային նրա առողջության համար այդ բոլոր
հիշված բացասական պայմաններով:

Ցարական բեժիմի ժամանակ որը 8-11 ժամ
աշխատելով *) մի բույե անգամ հանդիստ չու-
նենալով, յերեխան իր ժամանակն անց եր
կացնում մոլթ, շատ անգամ խոնավ ե ցուրտ
գործարաններում, ուր պակասում եր ի հարկե,

*) Արտասահմանում, ուր իշխանության գլուխ
կանգնած են դեռ կապիտալիստները, մինչև այսօր ել
փոքրահասակները աշխատում են որակաւ ութը ժամից
պակաս:

ե ողբ: Այդ ե պատճառը, վոր գործարան-
ների յերեխաները միշտ տալիս են հիվանդու-
թյունների ու վաղաժամ մահվան ավելի շատ
դեպքեր, քան նրանց հասակակից, բուրժուա-
ները, վորոնք ապրում են կատարյալ լիության
ու ճոխության մեջ, շրջապատված են գուրգուա-
լից խնամքով ուշադրությամբ, ե վորոնք
անգամ չեն լսել վոչ միայն ծանր աշխատանք,
այլ առհասարակ մինչև հասուն տարիքը գաղա-
փար չունեն աշխատանքի մատին:

Հաշմանդամներից շատերը, վորոնք վաղա-
ժամ գրկվել են աշխատելու հնարավորությունից
պարտավոր են դրանով միայն իրանց վաղաժամ
ծանոթությանը վարձու աշխատանքի հետ: Ամեն
մի խոշոր գործարանի մոտ կարելի ե մի ամբողջ
գերեզմանոց կազմել յերեխաների փոքրիկ
դագաղներից — գործարանի աշխատանքի այդ
նահատակներից: Կան ե մի շարք առան-
ձին պայմաններ գործարանային աշխատանքում,
կամ այլ զբաղմունքներում, վորոնք առանձնակի
դժոխան են յերեխայի որդանիզմի համար, վորպես
շատ փաստակար ե կորստաբեր բաներ մանկան
համար: Ամենից առաջ, յերեխան տանջվում ե
ֆիզիքական ծանր, լարված աշխատանքից: Պա-
տանեկական վոսկոնից դեռ շատ թույլ են ե,
շատ փուխը, վորոնք հեղուկ նրանց կատարելալ վոս-

կրացումը վերջանում է միայն 20 տարեկան հասակում: Յեւ վեթե յերեխային վիճակվում է ծանրություններ կրել, կամ կատարել մի այլ ծանր ֆիզիքական աշխատանք, նրա վոսկորները շատ անգամ չեն կարողանում տանել իրենց վրա ընկած ծանրությունը և այդպիսով ստացվում են սապատավորներ, կաղեր և ֆիզիքական այլ արատներ: Դեռ շատ վաղուց նկատված է, վոր պանդուկների հատակները մաքրող աղաների վոտները միշտ ծոված են լինում: Իսկ աղջկաների կազմվածքում, վորոնք շատ շուտ են աշխատանքի անցնում, նկատվում է սեռական թասի խախտում: Այդ այն թասն է, ուր ամփոփվում է մոր արգանդը, և ուր հղանում ու զարգանում է նոր կյանքը: Այդ պատճառով հազվագյուտ չեն այնպիսի դեպքերը, երբ կնոջ այդ թասը ստանում է աննորմալ կաղապար: Այդ դիպվածներում առաջ է գալի ծանր ծննդաբերություն - անկարելի դարձնելով շատ անգամ յերեխայի նորմալ լույսի աշխարհը գալը, հարկադրում են բժշկին արվեստորեն լուծել յերկունքը ոպերացիայի յենթարկել հիվանդ կնոջը, կամ նույնիսկ մեռցնել արգանդում լույս աշխարհ եկող մանուկին: Ի դեպ պետք է մատնանշել, վոր ծանր աշխատանքներին շատ շուտ անցնելու ազդեցության տակ, շատ աղջկաների

մեջ նկատվում է ամսականի (менструация) անբնական ընթացք: Ամսականը կամ ուշանում է, առաջի անգամ երևալով միայն 16 17 տարեկան հասակում, կամ հաջորդում են իրար շատ անկանոն ու կապված են լինում շատ անգամ ցավերի հետ: Այդ տեսակ կանացի հետազայում ևս հետ տառապում են սովորաբար կանացի ծանր հիվանդություններով: Այդ հիվանդությունները զրկում են կյանքի վայելքներից և լույսից, բայց, վոր գլխավորն է, նրանցից շատերը իսպառ զրկվում են մայր լինելու ընդունակությունից:

Իզուր չէ բանվորական շրջանում անծննդաբեր կանանց այնչափ մեծ թիվը, իսկ վիժման ու սեռած ծնդաբերության դեպքերը, ըստ հաշվետվության, երեք անգամ ավելի են, քան բուրժուական շրջաններում: Հետո կան աշխատանքի բազմաթիվ տեսակներ, երբ բանվորը ստիպված է առանձնակի ուժգին լարել իր տեսողությունը: Ուժ մ հայտնի չէ, որինակ, մատաղ աղջկաների աշխատանքից պատկերներ: Կար անողների թել մանողների, հաշեա գործողների և նման պրոֆեսիաներում: Վաղ առավոտվանից մինչև ուշ գիշեր մատաղ բանվորուհիները նստում են կռացած, փչացնելով իրենց աչքի լույսը այդ մանրակրկիտ ասեղնագործ աշխատանքում: Իսկ

տոներէի նախորդակին, ծնունդից, զատկից առաջ, կամ «մեծահանդես» մոմենտներէ ժամանակ, այդ անբախտ նահատակները ամբողջ գիշերներ են լուսացնում ասեղը ձեռքերին, վորովհետեւ պճնված արխտոկրատ փափկասուն և թեթեւ բարձր այլ կանայք ուժգին շտապեցնում են բանվորուհիներին, վոր պատվերը ճիշտ ժամանակին պատրաստ լինի: Իսկ վաղորոք այդ փափկասուն կանայքը վոչ մի կերպ չեն կարող տալ այդ պատվերը: Նրանք պետք է սպասեն սեզոնի վերջի մոմենտին, վորպեսզի աչքաթող չանեն առաջիկա սեզոնի համար պատվիրել մոդայի վերջի ճիշդ, վերջին խոսքը: Յեւ միթե պետք է զարմանալ այնուհետեւ, վոր գեռ 20 տատարին չըլրացած, այդ աղջիկները դառնում են կարճատես, կիտակոյր, միշտ արտառվալից, բորբոքվող աչքերով: Առաջ են գալիս սաստիկ զլխացավ բազմատեսակ ջղային ցնցումների հետ միասին, վորոնք կապ ունեն տեսողութեան խանգարման հետ: Գործարանային բազմատեսակ արտադրութեանների շարքում շատ կան այնպիսիները, վորոնք առանձնակի վնասակար են բանվորի առողջութեան համար: Յեւ եթե նրանք շատ արագ լափում, քայքայում են հասուն, առողջ բանվորի կազմվածքը, հետեւապէս վորչափ խիտ է նրանց ազդեցութեանը անչափահաս բանվորներէ որդա-

նիզմի վրա, վորոնք հնարավորութեան չունեն հաշող կուլելու իրենց շրջապատի վնասակար պայմանների դեմ: Յեւ ամենածանր աշխատանքների թվում վաղուց իրավացի ճանաչված է շախտանքի ու հանքերի աշխատանք, ուր ստացվում է ամբողջ արդշունաբերութեան հարկավոր քարածուխը, և մյուս մետաղների հանքերը: Այդ տեղ բանվորը իր ամբողջ որը անցնում է ստորերկրյա խորութեաններում, վորպէս խլուրդ, առանց արեւի լույսի: Շախտաներում, սովորաբար, սարսափելի շոգ է և սաստիկ տոթ, այնպէս վոր մարդիկ այնտեղ աշխատում են գրեթե մերկ, մինչդեռ թափանցող խոնավութեանը ու թափանցիկ քամին առաջ են բերում բանվորների շարքերում մշտական ցրտահար հիվանդութեաններ: Ողբ շախտաներում շատ ծանր է, շնչառութեան համար վնասակար. այդ ողբ պարունակում է իր մեջ շատ անպետք և նույն իսկ կյանքի համար վնասակար մի գազ, վորից հանքի խորքերում մարում է մոմը, իսկ փոքրիկ կենդանիները (ճագարը, ծովի խղր, և նույնիսկ փոքրիկ շնեքը) նույնիսկ մեռնում են: Շախտի ողն իր մեջ ածուխի փոշու ահագին քանակութեան է պարունակում, վորը շնչափողի ողի միջոցով անցնում է բանվորի թոքերը, առաջ բերելով մշտական հազ ու այլ լուրջ տառապանքներ: Մեռած

ածխահանքերում աշխատող բանվորի անդամահատութիւնը ցույց ե տալիս, վոր նրա թոքերը թե իրենց գույնով և թե կարծրութեամբ շատ նման են իսկական ածուխի կտորներին: Բացի այդ, աշխատանքը շախտայում միշտ կապված ե լուրջ հուզմունքների հետ, վոր վերապրում ե բանվորը հանքերում: Նա միշտ սպառնալիքի տակ ե և մտատանջված իր վիճակով: Իջնելով գետնի տակ, հանքերը, բանվորը յերբեք չըզիտե, դուրս կը գա յերեկոյան այդ նկուղից կենդանի ու անփորձ, թե վոչ: Նրա առաջ, վորպես չար վոզի, սիշտ կանգնած ե փորձանքը: Շախտան կարող ե լցվել ջրով և խեղդել բանվորին, նա կարող ե մնալ լեռնային փլատակների տակ, յերբ շատ անգամ փլշում են ամբողջ բլրակներ, կամ վերջապես, նա կարող ե և սղը ցնդել ու իր գերեզմանը գտնել շախտայի կամարների տակ, յերբ շատ անգամ պայթում ե գաղը, վոր ամբարվում ե հանքերում: Չը նայելով ստորերկրյա աշխատանքների բոլոր դժվարութեան ու վտանգին, զրեթե բոլոր երկրների շախտանքներում ու հանքերում այսոր ել կարելի ե գտնել փորբաճառակ յերեխաների: Առանձնապես շատ եին նրանք անցյալ դարում, երբ ազահ կապիտալի կամայականութիւնը այդ վայրում սահմանափակված

չեր դեռ վոչ մի որենքով: Ֆրիդրիխ Ենգելսը, բանվոր դասակարգի ամենահայտնի բարեկամներից մեկը, և հեղափոխական շարժման հայտնի ռահվիրան նկարագրում ե, թե ինչպես, հարյուր տարի առաջ, Անգլիայի շախտանքներում մերկ կանայք վորպես բեռնակիր անասուններ, քաշում եյին ածուխով բարձած սայլակները, ուժասպառ լինելով: Յեվ մինչև այսօր շախտանքներում դեռ շատ են այն յերեխաները, վորոնք հանքերի անցքերում կանգնած, լապտերները ձեռքերին, լուսավորում են ճանապարհը ածուխով բարձած անցնող վագոնետ կանների համար: Յեվ դրա հետևանքները շատ ակներե են: Այդ տեսակ յերեխաները կոտորվում են, վորպես ճանճեր, իսկ կենդանի մնացածներ, չեն զարգանում, կամ շատ թույլ առողջութիւն են ունենում: Ենգելսը հիշատակում ե բարաժուխի հանքերում աշխատող մի բանվորի մասին, վորի ատամները միայն հիշեցնում եին հասուն մարդուն, իսկ ամբողջ կազմվածքը կատարյալ յերեխայի եր. մի այլ գեպքում, բելգիացի մի կոմսուհի (իսկ կոմսերին ու կոմսուհիներին չի կարելի համարել պրոլետարիատի ու նրա յերեխաների կողմնակիցներ) պատմում ե, թե ինչպես, զրգված բարեգործական զգացմունքից նա վերցրեց հան-

քերից ժան անունով ինչ վոր մի տղայի, վորը ստիպված եր աշխատելու այդ դժոխային պայմաններում իր ընտանիքի չքավորության պատճառով: Ժանը շատ ընդունակ դուրս եկավ և կոմսուհին նրան ուսման տվեց, իսկ նրա ընտանիքին նա վճարում եր մի գումար, վորպեսզի հատուցի այն կոպեկները, վորոնք Ժանը առաջ բերում եր տուն իր աշխատանքով: Կարճ ժամանակից հետո կոմսուհին ստիպված եր մեկնելու այդ վայրից: Ժանի ծնողները նորից տղային ուղարկեցին առաջվա աշխատանքին: Յեւ դրա հետևանքը—աշխատանքը վերսկսելուց մի քանի ուր անց, շախտայի խորքերում գտնուծ են այդ երեխայի անշունչ դիակը—նա չեր կարողացել տանել այդ տաժանակիր աշխատանքը:

Բայց կա մի արտադրութիւն ևս, վոր գրեթե ամբողջովին լցված ե փոքրահասակներով: Խոսքը ապակու և ապակեղեն պատրաստելու մասին ե: Այդտեղ գրեթե միշտ բանվոր յերեխաների թիվը 2—3 անգամ ավելի ե հասակավոր բանվորներից: Մինչդեռ աշխատանքը այնտեղ այնքան ել հեշտ չե ընդհակառակը, շատ ծանր ե ու վտանգավոր: Ապակին ստացվում ե վառարանի մեջ հալվող քարերի և մետաղային հանքերի բաղադրութիւնից: Այդ վիթխարի վառարանը—«գուտտան» այնչափ ջերմացնում ե

գործարանի միջուրդը, վոր շնչառութիւնը այնտեղ գրեթե անհնարին ե դառնում: Բանվորները ամբողջ ժամանակ քրտինքի մեջ են, իսկ քրտինքը նույն իսկ չի չորանում, չը նայելով տիրող անտանելի շոգին: Թե վնրչափ անտանելի ե աշխատանքը այդ դժոխքում, բավական կը լինի ասել վոր գրեթե ամեն մի ապակու գործարանի մոտ պարտավորեցուցիչ շինվում ե ջրամբար և գրեթե ամեն բանվոր, միշտ մի ժամից հետո, վազում ե այդ ջրամբարը, սրկվում ե նրա մեջ, այլապես նա չի կարող աշխատել:

Յերեխաները սովորաբար կատարում են այստեղ այսպես կոչված «փշողների» աշխատանքը: Հատուկ երկար խողովակի միջոցով նրանք քաշում են վառարանից ապակու շիկացած հեղուկը, այնտեղից այդ հեղուկը դուրս ե գալիս վորպես մի փուչիկ իսկ հետո ստացվում են ապակու թերթեր: Յերեխաներն ել, ինչպես և հասակավոր բանվորները, տառապում են անտանելի շոգից, իսկ լողանալուց և սառն ու տաքի անդադար փոփոխումից նրանք ավելի շատ ու ավելի հաճախ ցրտահար են լինում, քան թե հասակավորները: Յերեխաները իրենք են կաղապար տալիս լապտերի ապակիներին: Այդ միջոցին նրանք չօրում են պայթալից վառարանի առաջ, նրանց կուրծքը սեղմված ե լինում և

այդ բոլորը անհետանալու չի չարող մնալ թոքերի կանոնավոր աշխատանքի պրոցեսում: Յերբեմն երեխաներից ավելի հասակավորները իրենք են ըսելու՝ փչել ապակու հեղուկը, լարելով դրա համար ամբողջ թափով իրենց շնչառության որդաները:

Այդ բոլորի հետեւանքով առաջ են գալիս թոքերի լայնացում, բրոնխիտ, հազ, թոքերի լուրջ հիվանդություն և թոքախտ: Չը կա ավելի դժվարին գործ, քան թե այդորինակ աշխատանքը, վոր առաջ է բերում թոքերի լարում և վոր անչափ կորստաբեր է մատաղ սերնդի համար: Միայն անդուլթ կապիտալը, վոր տակավին հաշվի չի առնում բանվորի առողջությունը, և վորը շահագրգռված է միայն իր ավելորդ բուրքիով, անտարբեր նրան՝ վոր այդ բոլորը ստացվում մարդու արյան ու քրտինքի գնով, միայն այդ անդուլթ կապիտալը կարող է այդչափ երկար շարունակել արտադրության այդ բարբարոս միջոցը: Յեւ միայն վերջին տարիներում նա վորձեց փոխարինել այդ աշխատանքը մեքենայով:

Ապակու գործարաններում երեխաները միշտ ստուգվում են ստամոքսի և աղիքների հիվանդությունից (փորացավ, սիրտ խառնել), վորովհետեւ զարհուրելի շոգն առաջ է բերում այբող ծարավ ու ստիպում է գործ ածել մեծ քանակությամբ ջուր, վորը գրեթե միշտ հում է լի-

նում: Գետնի վերա, «գուտտայում», միշտ թափված են ապակու բազմաթիվ բեկորներ և այդ թափթփուկը գոյանում է թե անպետք ապակու ջարդվածքներից և թե ապակու բարակ շերտերից, վորոնք առաջանում են ապակու հեղուկը սառեցնելու ժամանակամիջոցին: Այդ է պատճառը, վոր յերեխաները շատ անգամ վիրավորում են իրենց ձեռներն ու վրաները: Վերքերը, բորբոքվելով, առաջ են բերում ցավալից թարախ: Այս բոլորի պատճառը քրտինքի հետ միասին մարմնի վրա տարածված կեղտն է, վոր պարունակում է իր մեջ կենդանի մանրիկներ—միկրոբներ, սրանք են ամեն տեսակի հիվանդությունների տարածողները:

Վերջապես, վերին աստիճանի ֆուսսակար է բոլոր բանվորների առողջության համար, իսկ անչափահասների համար նամանավանդ, ապակու փոշին, վոր ահագին քանակությամբ թափվում է ապակեղեն պատրաստելու ժամանակ: Ապակու փոշին, յեթե գլտելու լինենք նրան խոշորացույցի միջոցով, տեսնում ենք, վոր ներկայանում է մեզ գեների մի սուրիդ խանութ, արսենալ: Այդտեղ դուք կը գտնեք ամեն տեսակի ֆինական դանակներ, դաշույներ, նիզակներ և մարդկային տանջանքի բազմատեսակ գործիքներ: Հասկանալի է, վոր այդ բոլոր ապակու

փոշին, անցնում է մեր թոքերը, ուր իր ընթացքում հանդիպում նրա ամենաքնքույշ մասերին, այդ փոշին վոչ միայն զրգուում է մեր թոքերը, այլ և քայքայում է նրանց:

Թուլացած ու զրգուված թոքերը ամենապարարտ հողն են մարդկության դաժան թշնամու — թոքախտի զարգացման համար: Իզուր չեն այդ հիվանդությունը «փոշու հիվանդություն», կամ «պրոլետարի ցավ» անվանում: Թվերը մեզ ցույց են տալիս, վոր վոչ միայն ապակու վողարկման (шлифовка) աշխատանքով զբաղված բանվորների շրջանում, այլ և բոլոր բանվորական խավերում, վորոնք աշխատանքի ընթացքում գործ ունեն փոշու հետ, թոքախտավորների թիվը յերեք անգամ ավելի է, քան թե բանվորական այլ շրջանում: Իսկ երեխաների մեջ բանվոր դասակարգի այդ անգույն թշնամու զոհերի թիվը ավելի մեծ է, քան հասակավորների շարքերում: Շատ թոքախտավորներ, թե հասուն և թե մատաղ հասակում, նկատվում են ձենապակու կամ հախճապակու արդյունաբերության մեջ: Այնտեղ գտնվում է ապակին սրելու բաժանմունք, ուր դրա համար հատուկ կաշվով, կամ գմռնիստ (наждачная) թղթով կոկվում և փայլ են ստանում թեյամանները, թասերը, բաժակները ու այլ անոթները: Այդ աշխատանքը

առաջ է բերում մեծ քանակությամբ հանքային մանր փոշի: Այդ բաժանմունքում միշտ շատ են լինում երեխաները, վորոնք թե վորպես առձեռն բանվորներ են և թե վորպես հատուկ աշխատողներ, ամանեղենի բաղմաթիվ փոքրիկ մասեր պատրաստողներ: Թոքախտավորների թիվը այդ բաժանմունքում էլ այնչափ մեծ է, վոր բանվորները իրենք այդ մասն անվանում են «տանջանքի» բաժանմունք, իսկ ուս հայտնի գործարանատեր Կուզնեցովը նույնիսկ հատուկ հիվանդանոց — կիռասանատորիաներ հիմնեց իր թոքախտավոր բանվորների համար, վորովհետև այդ հիվանդների մեծ թիվը ձենապակու-հախճապակու արդյունաբերության մեջ. չեք կարող իր վրա չը հրավիրել նույնիսկ վոչ այնքան զթասիրտ կապիտալիստի ուշադրությունը: Կան դեռ շատ տեսակի արդյունաբերություններ վորոնք կապված են շնչառության ժամանակ փոշու մեծ քանակի սպառման հետ, բայց և հիշած որինակները լիովին բավարար են բանվորության դրությունը պարզելու համար: Բացի փոշուց, առանձնապես վնասակար է յերեխաների առողջության համար և այսպես կոչված «արդյունաբերության թուխը», վոր թեև դանդաղ, բայց անվրեպ թունավորում է բանվորի որդանիզմը: Յեւ հենց դրանով է վրտանդավոր այդ տեսակի աշխատանքը, ուր թըշ-

նամին մոտենում ե ձեզ տմարդի ու զաղտագողի: Ամեն մի ժամ և ամեն մի րոպե բերում ե որդանիդմին թույնի մի փշուր, իսկ բանվորն այդ բոլորովին չի նկատում ու միշտ իրեն շատ առողջ ե համարում: Մինչդեռ չար վոգին դանդաղ, բայց շատ համառ կատարում ե իր վոճրագործությունը: Յեւ մի որ թշվառ բանվորը հանկարծակի նկատում ե լուրջ հիվանդության բուրր նշանները բայց արդեն ուշ ե լինում, բժշկվելով վերականգնել առողջությունը: Բանվորի կազմվածքն արդեն լիովին լցված ե լինում թույնով և նրանից ազատվելն անհնարին ե դառնում:

Թունավորման ծանր բռնկումները, վորոնք առաջ են բերում դաժան տառապանքներ, աճում են արագ ու անընդհատ, և հիվանդը աստիճանաբար դառնում ե կատարյալ հաշմանդամ, աշխատանքի անընդունակ ու շատ անգամ վերջացնում ե իր կյանքն անտանելի տանջանքներով:

Այդ սուր թույնի տեսակները, վորոնք այնչափ մահացու յեն մարդու կազմվածքի համար, այնուամենայնիվ դեռ շատ ու շատ տեղեր շարունակում են շրջանառել արտադրական ձեռնարկություններում: Մասնացույց անենք ավելի վտանգավորները ու համեմատաբար ավելի շատ պատահողները: Ամենից առաջ հայտնի ե արձիճի

թունավոր լինելը: Այդ թույնը բաժին ե ընկել տպարաններում աշխատողներին և այն բանվորներին, վորոնք պատրաստում են արձիճի սպիտակուցը, և արձիճ պարունակող այլ ներկեր: Պատկանում ե նաև դեղագործներին, ներկարարներին և այն բանվորներին, վորոնք աշխատում են տասնյակ այլ արդյունաբերական ձեռնարկություններում ու պրոֆեսիաներում:

Հազվագյուտ չե, վոր բանվորն իրեն կատարելապես առողջ ե զգում, մինչդեռ նրա արյան մեջ արդեն ամբարվել ու լուծվել ե բավականաչափ արձիճ: Շատ անգամ, եթե հայելու լինեք այդ ըստ երեվոլյութին առողջ մարդու բերանը, դուք կը տեսնեք, վոր նրա ատամների ծայրերում, լնդերքի վարդագույն մսի վրա, վոր ծածկում ե ատամի սկիզբը, կա մի կապույտ մոխրագույն ժապավեն, վորը կոչվում ե «արձիճային բոլորակ»:

Այդ ցույց ե տալիս, վոր բերանի ներսի մասն արդեն տոգորված ե արձիճի փոշու մի փոքր մասով և, հիրավի յեթե այդ ժամանակ հաճախ վողողում են բերանն ու մաքրում ատամները, այդ գունավոր բոլորակը կարող ե բոլորովին անհետանալ: Բայց մի քանի ժամանակից հետո այդ բոլորակը դառնում ե կայուն, բերանի վողումը այլևս չի ոգնում, և հայտնվում են

մի շարք նշաններ, վորոնք ցույց են տալիս թե թունավորումը ինչ չափերի է հասել: Սկզբում այդ նշանները այնչափ ել լուրջ չեն և բանվորը վերադրում է այդ պատահական երեվույթներին: Նա սկսում է նիհարել, կորչում է ախորժակը, բերանում առաջանում է մի առանձին քաղցրավուն համ ու վատ հոտ: Բանվորի երեսը դուրսատվում է, իսկ նրա ամբողջ կաշին ընդունում է առանձին մոխրի գույն, վոր դարձյալ գալիս է ասելու, թե արձիճի վոշու հատիկները ամուր բնակալում են կաշու ամբողջ տարածությամբ:

Այնուհետև հիվանդության նշանները բազմանում են և իր աշխատանքի թշվառ գոհը զարհուրելով նկատում է, վոր նա բռնված է ծանր հիվանդությամբ և վոր կատակել այստեղ արդեն չի կարելի: Երբ բժշիկը բանվորին պարզում է վոր այդ բոլորի պատճառը պրոֆեսիոնալ հիվանդությունն է, այն ցավը, վոր կապված է նրա աշխատանքի հետ, և վորի բուժման միջոցն է փոխել զբաղմունքը, արհեստը, այդ արդեն ուշ է լինում: Թույնը արդեն շատ խոր և ամուր թափանցած է լինում որդանիցմը և վտարել նրան այնտեղից այլևս անհնարին է դառնում:

Ամեն մի նոր որ բերում է նոր անալիզալություն հիվանդությունը վատթարանում

է, փչանում է ստամոքսը, հայտվում է ուժեղ փորկապ, այդ ցավն ունի նույնիսկ իր հատուկ անունը, սուր ցավը կոչվում «արձիճային ծակումներ» (СВИНЦОВЫЯ КОЛИКИ): Այնուհետև սկսվում են ցավերը դանազան խաղերում ու մկաններում, իսկ լուրջ դեպքերում առաջանում է ջղաձգություն և կաթված:

Կաթված անվանվում է այն դրությունը, երբ մեր մարմնի առանձին մասերը վոտը, կամ ձեռքը, կամ երկուսը մի կողմից, (իսկ երբեմն և երկու վոտը ու երկու ձեռքը միասին) բոլորովին դադարում են գործելուց: Այդ պատահում է նույնպես երբեմն կաթվածի պռաջի հարվածից հետո, յերբ հիվանդը, մի փոքր կաղդուրվելով, այնուամենայնիվ չե կարողանում ոգավել ձեռքի և վոտի շարժվումով: Ձեռքերը «մտրակի» բնույթ են ստանում. յեթե նրանց բարձրացնող լինի, նորից ընկնում են, վորպես անկենդան: Բայց յերբեմն վոտի և ձեռքի շարժվածքը բոլորովին չի վերացվում: Յերբեմն հիվանդը կորցնում է վորոշ շարժվածք կատարելու ընդունակությունը, որինսկ, չի կարողանում կռացնել ձեռքի արմունկը, ամբը, չի կարողանում բռունցքը սեղմել, և այլն: Ուրեմն ինչով է բացատրվում այդ ընդհանուր, կամ մասնակի կաթվածը: Կարող են արդոք, մեռնել մարմնի առան-

ձին մասերը, յերբ ինքը մարդը, դեռ կեն-
դանի ե: Մեզ պարզելու համար, թե ի՞նչ է կա-
տարվում այդտեղ, առաջ բերենք մի որինակ-
յերբ մեկը կտրում է այն պարանը, վոր կախված
եր գանգի լեզվից, կամ խզում է ելեքտրական
գանգի կապը թե առաջին, և թե յերկրորդ դեպ-
քում փչացած չե գանգը, և եթե մենք մի վորևե
խթանով շարժելու լինենք գանգի լեզվակը, ա-
ռաջ կըգա գանգահարություն. գանգը կը գործի,
բայց գանգի կապն արտաքին աշխարհի հետ կը-
տրված լինելով, նա այլ ևս չի գործում: Յեվ
ահա դեպի մեր մարմնի ամեն մի մկանսիկը, վո-
րոնցից կախված են բոլոր նույնիսկ նվազագույն
շարժումները, անցնում են հատուկ կապեր մար-
մնի գլխավոր շտաբից—մեր ուղեղից, վորի
հրամանով և կատարվում է բոլոր մկանների
շարժումները: Ու բավական է խզել միայն այդ
կապը, վոր նյարդ է կոչվում, կամ յերբ վերջինս
հիվանդանում և դադարում է կատարել ստաց-
վող հրամանները անկարելի յե դարձնում անմի-
ջապես և նրա հետ կապված մկանի շարժում-
ները: Նույնը արձիճն է, վոր թունավորում է
բայց, վոչ բոլորը: Նա մեռցնում, թունավո-
րում է այն նյարդերը միայն, վորոնց միջոցով
մկանները ձեռք ու վոտք շարժելու կարգա-
դրություններ են ստանում: Յեվ այդ պատճա-

ռով իրանց կամքով նրանց ուղղել բոլորովին ան-
կարելի յե: Արձիճային կաթվածի դեպքերում
ձեռքն արմուկքում միշտ կորացած է լինում,
ձեռքի թաթը՝ կախ, իսկ մատների տեսքը
հիշեցնում է այն դրությունը, երբ ձեռքից
բաց են թողել մի բան, վոր մինչ այդ բռնած
են եղել: Կաթվածային այդ յերեկույթներից հե-
տո կարելի յե համարձակ, ասել, վոր արձիճային
թուլնից տառապողը դատապարտված է մահվան:
Հիվանդը խիստ և արագ նիհարում է, տառա-
պում է բազմատեսակ տանջալից ցավերով և
հսկայական քայլերով դեպի մահն ընդառաջ է
գնում: Ու այդ մահը շատ անգամ կապված է
սաստիկ տանջանքների հետ լուծվում է ջրգո-
ղությամբ (водянка), իսկ երբեմն ընդհակա-
ռակը, կատարյալ բթամտության շրջանով: Նույն-
պես շատ ծանր են սնդիկով (прут) թունավոր-
ման դեպքերը: Այդ դիպվածները մինչև այսօր
նկատվում եին շատ անգամ հայելիներ պատրաս-
տելու միջոցին, իսկ այժմ դուք կը հանդիպեք
նրանց սնդիկի հանքերում, շապո, գլխարկների
գործարաններում, այն գործարաններում, ուր
պատրաստվում են ծանրաչափեր (барометр),
ելեքտական լապտերներ և նման իրեր: Սնդիկի
թույնը սկզբում սովորաբար պատում է բան-
վորի բերանը: Առաջ է գալիս բերանի խիստ

բորբոքում, բերանը կարմրում է և ուռչում: Թքի հոսանքը սովորականից ավելի է դառնում, լնդերքից հոսում է արյուն: Տեղ-տեղ բերանում հայտնվում են խիստ ցավ պատճառող վերքեր և բերանից դարչ հոտ է տարածվում: Ատամներն սկսում են փշանալ, երերվել կամ բոլորովին թափվում են:

Այնուհետև զալիս և այսպես կոչված սնդիկային յուծախտը (рутная сухатка) մարդը թուլանում է, նիհարում մեռելի դեմքի նման նրա դեմքն ել հողի գույն է ստանում: Առանձնակի բնորոշ է սնդիկով թունավորված բանվորը նրանով, վոր նրա ամբողջ մարմինը սկսում է դողալ, ստեղծելով անտանելի կացություն: Այդ դողը յերբեմն այնչափ ծանր է, վոր նրա ուժգին խթաններից հիվանդը բոլորովին անկարող է լինում մնալ անկողնում և հետեվապես, քունը միանգամայն կորչում է: Այդ տեսակ թշվառը վռչինչ չի կարողանում անել և նույնիսկ հնարավորություն չունի ինքը հագնվելու կամ ուտելու:

Այդպիսով կյանքը դառնում է մի կատարյալ դժոխք: Մահը դալիս է վորպես մի ցանկալի փրկություն: Կան դարձյալ դեռ շատ արդյունաբերություններ, ուր բանվորը ստիպված է գործունենալու վերին աստիճանի թունավոր իրերի հետ, վորոնք բերում են նրան բազմատեսակ և շատ անգամ ծանր ու ցավալից հիվանդություն-

ներ: Այդ դեպքերի մասին զրված են մեծածավալ զրքեր, զխտական հատուկ հետազոտություններ, սրանց մանրամասն վերլուծումը այստեղ կարող եր շատ տեղ բռնել: Այդ պատճառով բավականանանք այն մի քանի բնորոշ որինակներով, վոր ես առաջ բերեյի այստեղ:

Բոլոր դեպքերում արդյունաբերական թույնը ազդում է անչափահասների կազմվածքին ավելի խիստ քան հասակավորների ու այդ շատ հասկանալի յե:

Յերեխան, վոր դեռ չի կազմակերպվել, ամբողջել, վորը դեռ շարունակում է զարգանալ, աճել, թե թույլ է, ի հարկե, և թե մեծ չափով ենթակա արտաքին աշխարհի բոլոր վտանգներին: Բայց թոյների վերաբերմամբ այդ բացատրվում է դեռ և հետևյալ հանգամանքով: Մեր մարմնի բոլոր մասերում և հյուլներում, գլխավորապես արյան մեջ կա, ինչպես հայտնի է, մեծ քանակությամբ բուժիչ տարր: Այդ պաշտպանելից տարրը, ի միջի այլոց, ոժտված է և բոլոր արդյունաբերական թոյները անփաստ դարձնելու ընդունակությամբ: Բայց մարդը այդ հակաթոյն միջոցների մեծ պաշարով հանկարծ չի ծնվում այդ միջոցները մշակվում են մեր որգանիզմում աստիճանաբար, այնչափով, վորչափ վոր իրականություն մեջ նրանք ընդհարվում են

այդ թուևոտ տարրերի հետ: Իսկ յեթե այդ այդպես է, ուրեմն հասկանալի է, Վոր յերեխան, անչափահասը, այդ լուռ կռվում ավելի թույլ են զինված, քան հասուն մարդը ու հետեւապես շատ դեպքերում նրանք պարտվում են:

Բազմաթիվ թվերն հաստատում են այդ փաստերի ճշտությունը: Այսպես որինակ, աշխատանքը ծխախոտային արդյունաբերության մեջ Վոր ամենամեծ ասակարներից մեկն է, բացի այլ բացասական երեւոյթներից առաջացնում է սրտի ջղային բարախում: Յեւ մի կին-բժիկ հետազոտություն հիման վրա, ուշագիր ուսումնասիրել է ուսումնական ծխախոտային գործարաններում աշխատողների առողջապահական դրությունը, հայտնվել է Վոր չափահասների շրջանում սրտի ջղային բարախումը կարելի եր տեսնել չորսից մեկում, մինչդեռ յերեխաների մեջ զբանով տառապում են նրանց կեսից ավելին, այսինքն կրկնապատիկ մի թիվ:

Նույնպես անհամեմատ շատ են նրանց շրջանում և շնչարգելության դեպքերը: Նույնաման թուևալից հետեւանքներ են ստացվել և մյուս շրջաններում: Յերեխաները Վոր միայն հաճախ հիվանդանում են այլ շնորհիվ գործարանային կյանքի բազմատեսակ վնասակար պայմանների նրանք անընդունակ են դառնում հետագա

աշխատանքի համար: Մեր գործարանային արդյունաբերությունը միշտ զոհաբերում է կապիտալիստների հարստանալու անհագ ծառավիճ բազմահազար այն ժամանակ նահատակներ, գործարանային ձախորդ զիպուածների հետեւանքով, ստեղծում հաշմանդամների հսկայական թիվ: Մեքենաներն այսօր գործարաններում գործում են շրջմեցուցիչ արագությամբ: Մասնավոր գործարանների տերերը, Վորոնք մտածում են միայն իրենց հասույթների մասին, գրեթե Վոր մի ուշադրություն չեն դարձնում գործարանի վտանգալից գրություն և զլանում են նույնիսկ փոքր ծախքեր անելու այդ դրությունն ապահովելու համար: Անիվներին անթիվ քանակը, ատամնավոր անիվները և այլ մասերը, Վոր շարժվում են զանազան ուղղությամբ ծայրե ի ծայր բռնում են գործարանը: Շատ անգամ առանձին մեքենաների միջև եղած անցքերը շատ նեղ են լինում և լցված անպետք նյութերով, պատրաստի իրերով, և բազմատեսակ անպետք մնացորդներով: Կաշվի—փուկերն ու պարանները, առանց Վորևե զգուշացնող պարագաների, ամեն բույե կարող են կտրվել և մեծ թափով կարող են հրել պատահամբ անցնող բանվորին: Արագ շարժվող տափակ ու շրջանաձև սղոցները կարծես թե սպասում են պատեն առիթի առաջին, անզգույշ, կամ անու-

շաղիւր դեպքում կտրելու բանվորի մատը, նույն-
իսկ ամբողջ ձեռքը: Ձանազան գործիքներ բազ-
միցս անգամ անկերպարանք խառնուրդ են դար-
ձրել «պատահմամբ» ձախորդութեան հանդիպած
լրենց գոհի արշունը, միսը ու վոսկորներն բե-
կորները: Յեւ ժամանակակից գործարանում աշ-
խատանքի այդ պայմանները պահանջում են բան-
վորից առանձնակի ուշադրութիւն դեպի իր
ամեն մի քայլը: Վա՛յ նրան, ով անուշաղիւր ե,
կամ անզգուշ ե շարժւում, նա վորի հագուստի
և մի կտորը ընկնում ե մեքենայի տակ, և եթե
նա չի ել նահատակւում, աշխատանքի անընդու-
նակ, հաշմանդամ ել չի դառնում դեռ երկար նա
չի կարողանում վերականգնել իր վնասված առող-
ջութիւնը: Յեթե հասակավոր և փորձված բան-
վորը, վորը լավ գիտե իր գործարանը, նրա ամեն
մի մեքենան, այնչափ հեշտ զոհւում ե արդու-
նաբերական կազմակերպութեան գիշատիչ մի-
ջոցներին, վորը բոլորովին չի մտատանջված
բանվորի վտանգակից դրութեամբ, շատ հասկա-
նալի ե, թե վորչափ ավելի վտանգավոր ե այդ
պայմաններում անչափահասների աշխատանքը:

Դեռ նոր գործարան մտած յերեսման նույն-
իսկ չի ենթադրում, թե վորչափ վտանգ ե պար-
փակում իր մեջ ամեն մի անիվ, ամեն մի գոր-
ծիք, պտուտակ ու փուկ: Նա դեռ լավ չը

գիտե, թե ի՞նչպէս պետք ե վարվել մեքենայի
հետ և իր հասակին համապատասխան չարաճճի
անհոգութեամբ, իսկ յերբեմն և տղայամտութեամբ,
ուշադրութիւն չի դարձնում մշտական սպառ-
նալիքի վրա և շատ հեշտ զոհ ե դառնում ան-
բախտ դիպվածի: Նրան նպաստում ե և այն,
վոր յերեսայի ուղեղը ավելի արագ ու ավելի
ուժեղ ե հոգնում, քան հասակավոր բանվորինը:

Անչափ երկար բանվորական որվա և աշխա-
տանքի մյուս վնասակար պայմանների ազդե-
ցութեան տակ, նրա միտքը, շուտ խանգարւում
ե, ուշադրութիւնը բթանում, իսկ այդ բոլորը
հենց և պետք են նենգ մեքենային, վորը չունի
ապահովիչ միջոցներ:

Բոլոր յերկրների գործարանների ձախորդ
դեպքերի ստատիստիկան ցույց ե տալիս, վոր
գոհերի թիվը անչափահասների շրջանում միշտ
ավելի ե, քան հասակավորներինը: Այդպէս, որի-
նակ, մի հաշվետվութեամբ, Ֆրանսիայում կա-
տարված ամեն մի 100 անբախտ դեպքերից 41
ընկնում ե մինչև 15 տարեկան յերեսմանների վե-
րա (իսկ այդպիսիները Ֆրանսիացի բանվորների
մեջ յերբեք 5 տոկոսից ավել չեն լինում): Այս-
պէս կարելի ե ասել, վոր փոքրահասակները
8 անգամ ավելի յեն ենթարկւում հաշմանդամու-
թեան քան մյուս մնացած բանվորները: Բացի

այդ, ծանր աշխատանքը ազդում է յերեսայի կազմվածքի և առողջության վրա: Կա մի հին առած,— առողջ մարմնում առողջ հոգի,— և այս դեպքում ժողովրդական իմաստությունն ավելի քան տեղին է: Սաստիկ տուժում են գործարանային աշխատանքներից թե մտավոր ընդունակությունները և թե բնավորությունը:

Ամենից առաջ փոքրիկ բանվորը շատ շուտ է յենթարկվում այսպես կոչված ջղայնության: Ամենաանհշան դառնությունը— միշտ է առաջացնում, արտասուք, ամեն մի անհշան պատճառով նա ջղայնանում, բարկանում ու գայբանում է: Պատանին, զարգանալով, ազահությամբ յուրացնում է իր շրջապատի կյանքը: Նրա վոգին լի յե ամեն տեսակի հարցերով ու ու վորոնումներով և նա լայն բացած աչքերով նայում է սքանչելի արտաքին աշխարհին, վոր այնչափ նրա համար հետաքրքիր է, հանելուկային ու անհասկանալի: Իսկ աշխատանքի միջոցին նա ժամանակ չունի գիրք կարդալու, վորը կարող է պատմել նրան խորհրդավոր բնության անհասկանալի իսկությունը և հնարավորություն կրտա նրան իր շուրջը կատարվող խորհրդավոր անցուդարձի իմաստը հասկանալու: Այդ պատճառով շրջապատի մեծերից - ծնողներից, թե իր ընկեր բանվորներից շարունակ պա-

տասխաններ է սպասում իր բոլոր հարցերին: Բայց վոչ վորքի մեջ նա ջերմ վերաբերմունք չի գտնում: Վոչ վորք չի արձագանգում նրա դաշտային ծաղիկի նման նուրբ ու մաքուր մանկական հոգուն, վորն այնչափ ծարավի յե համակրության ու դուրգուրանքի: Նրա շուրջը բոլորն ավելի քան զբաղված են և տրամադիր չեն ուշադիր լինելու դեպի ամեն մի չարաճճի: Դաժան կյանքը, վորպես մի ծանր քար, ճնշում է նրա ընտանիքը: Կարիքի զարհուրելից ուրուականը, քաղցը, ցուրտը, միշտ կանգնած նրա դռան հետեւում, ստիպում են կիսաքաղց լինելու և միշտ ընկճված տառապելու դառնալից հոգսով— կոճենեամ ես վաղն ել «հաց մեր հանապազորդ»: Այդ է պատճառը, վոր բոլորն ել չորս կողմը մտատանջված են, մոայլ ու չարալըց: Յեվ դժվար է պահանջել, վոր անկարելից բախտի այդ անողոր կուլում երեսան պահանջի ավելի մեծ չափով ուշադրություն, նույն իսկ ամենազգթալից մայրը, վորն անքուն գիշերներ է անցնում վորդու անկողնու մոտ, յերբ հիվանդանում է, սովորական որերում նրա անընդհատ հարցերին սովորաբար ջղայնալից պատասխանում է.

— Բավական է, լովր.... գործի անցիր, և վոչ թե հիմարություններով զբաղվիր... ավելացնում է մայրը և երբեմն, դառնալից բուռններին, հրում է վորդուն: Իսկ ոտար մարդկանց

մասին վորոնց շրջանում գտնվում է գործարանում յերեխան, խոսելն անգամ այդ ուղղութեամբ, ավելորդ է: Նրանք միանգամայն անտարբեր են դեպի յերեխան: Բայց սակավ չեն այն դեպքերը, երբ կյանքի հանրութեան տակ լճացած խուլ բողոքն ու դառնութիւնը հասակավոր բանփորը թափում է անչափահասներն զլխին և ոգտվելով նրա անպաշտպան դրութիւնից, նա քամում է այդ երեխայի վերջին հյութը, ստիպելով նրան բանել թե իր և թե ուրիշների փոխարեն: Մեկուսացած իր ներքին աշխարհում մեծանում է այդ յերեխան, չըհանդիպելով վոչ մի տեղ ջերմ վերաբերմունքի: Աշխարհում նա վոչ վոքի չի հավատում, բոլորի մեջ նա իր թշնամին է տեսնում, և խուլ դառնութիւնն ու չարութիւնը աճում են նրա սրտում: Նա չի տեսնում, թե վոքտեղ են նրա իսկական թշնամիները և վորտեղ են բարեկամները: Նա չի հասկանում, վոր բոլոր բանվորներին ել ճնշում է այն դաժան հրեշը, վոր կապիտալ է կոչվում: Նրա մեջ հահասունանում է մուսլ ատելութիւնը դեպի իրեն բոլոր շրջապատողները, նա գտնում է, վոր մարդկային հասարակութիւնը բաղկացած է միայն գալլերից, վորոնցից ամեն մեկը իր մասին է մտածում միայն:

Յերեխան մեծանում է վորպես մի եգոիստ-իր

եսը պաշտող, նա ձգտում է սիայն դեպի իր անձնական բարորութիւնը, նույնիսկ հենց ի հաշիվ բոլոր մնացածների: Վաղ մանկութիւնից նա սկսում է ատել աշխատանքը, վորի մեջ նա տեսնում է միայն ծանր լուծ ու անողորմ անեծք: Նա ամեն կերպ աշխատում է խուսափել աշխատանքից: Յեւ հենց այդ է պատճառը, վոր այնչափ բազմաթիվ են փոքրահասակ բանվորներից «հանցավորները»: Թափառաշրջիկութիւնը, հեշտ վաստակը, մանր գողութիւնները, իսկ յերբմն պոռնկութիւնն սպանութիւններն անգամ, այդ բոլորը հնարավոր են դառնում այն պատճառով, վոր նա ծավալում է յերեխայի մտավոր ու կենսունակ ուշթերը, վորոնք ճնշվում են գործարանում և բացում են նրա առաջ այն բանտի դռները, վոր ընդառաջ է բերում նրան գործարանը: Մինչդեռ կուշտ, վայելչութեան համար ծնված բուրժուան ու գաղտագողի անբարոյական կյանք վարող տերտերը, հրճվանքով են հաշվում թե վոքքան հանցավորների է տալիս «հասարակութեան ցածր դասակարգը»: Նրանք չեն տեսնում, վոր մեղավորը այդ բոլոր դեպքերու ել այն կապիտալիստական կառուցվածքն է, վորի պատճառով իրենց երեխաները սնվում են ու մեծանում վայելքի ու գծվանքի ծոցում: Նրանց համար պատրաստ են դայեակները, դաստիարակ-

չունինները, և ամենալավ ուսուցիչները, բայց իսկական արդյունաբերող աշխատավորների միլիոնավոր յերեխաները, 7-8 տարեկան հասակից արդեն հարկադրվում են ամեն ուր, ձմռան դաժան ցրտին և ամառվա սարսափելի շոգին վեր կենալ լուսաբացին, և երբեմն ավելի շուտ: Ուղղակի անկողնուց քաղցած փորով ստիպված՝ բարձր դալ դեպի գործարան, ուր ամենադաժան պայմաններում նրանք հարկադրված են աշխատելու գրեթե առանց ընդմիջումների ամբողջ ուր:

Մանկան աշխատանքը լուրջ ազդում է և նրա մտավոր զարգացման վրա: Ամենից առաջ գործարանային աշխատանքը սովորաբար անկարելի է դարձնում դպրոց հաճախելը, և հենց այդ պատճառով ել պրոլետարիատը զրկվում է ամենաանհրաժեշտ գիտելիքներից, վորոնք ոգնում են մեզ տնորինել կեանքը մեր սեփական ցանկությամբ, և վոչ թե գնալ հոսանքով: Բայց և առհասարակ կանուխ աշխատանքը շատ խիստ ազդում է մարդու ընդունակության վրա: Շատ հաճախ աշխատանքը գործարանում անչափահասի համար միատեսակ է միշտ և շատ հոգնեցուցիչ:

Որեց-որ, ժամից-ժամ կրկնում է յերեխան միևնույն մեքենայական շարժումը, կամ չը ցըրելով իր ուշադրությունը, նա լարված հայաց-

քով դիտում է մեքենային, կամ նրա մի առանձին մասին: Բայց այդ նրան վոչինչ չի տալիս, նա վոչ մի բան չի սովորում այնտեղ: Ընդհակառակը, այդ տավակությունը, միակերպությունը, և լարված ուշադրությանը, ծայրայեղ ձանձրալի բնույթը, դարձնում են նրան մի ինչ վոր անհոգի և անիմաստ կենդանի, ապուշ, կիսավտոմատ: Գործարանը, վորպես մի ծանր կոշմար, ճնշում է նրա պատանի եությունը, և շատ անգամ, յերազում կանգնում է նա յերեխայի առաջ վորպես մի սարսափելի, չարամիտ, բայց ամենակալող հրեշ: Սառը քրտինքի մեջ կորած, ճշարով, գիշերները, զարթնում է յերեխան անիծելով այդ հրեշ—գործարանը: Շատ լավ է ներկայացնում այդ տեսակ յերեխաների վերապրումները մի հին բանաստեղծություն:

— Լալիս են թշվառ մանուկները:

— Մենք տանջվել, ուժասպառ ենք եղել: Վազվզել ու ցատկոտալ այլևս չենք կարող: Ստորերկրյա, ծանր լծի տակ, մենք կռացած բոլորել ենք ամբողջ ուր:

— Կամ լուսաբացից կանգնիր ու պտույտ տուր անիվը:

Աղմկալից պտույտ են գործում անիվները, Ողի սրությամբ կտրելով մեր երեսները, Յեվ ահա, քիչ-քիչ նրանց հետ,

Ամեն ինչ շարժվում ես սրընթաց:

Մեր ուղեղը, մեր սիրտը և ողորդ ու լուսա-
նուշի մոխրագույն լույսը,

Յերկինքը, մույլ կամարները, և ճանճերը սև
պատերի վրա,

Ամեն ինչ պտտվում ես, ամեն ինչ շարժվում:

Առավոտվանից մինչև ուշ գիշեր,

Յեվ այնպես չարագուշակ զարկերով...

Յերբեմն մենք պատրաստ ենք վայր ընկնե-
լու,

Ուզում ենք չոքել այդ մեքենայի առաջ
և աղաղակել:

Դադարիր, վերջապես,

Գեթ մի ակնթարթ մի գործիր:

Բայց վոչ, իզուր ես աղերսանքը,

Ամեն ինչ տարվում ես ըստ կարգի,

Միշտ առաջ են գնում անիվները,

Վորպես համբավաբեր ճակատագրի:

Այդ տեսակ աշխատանքը, յեթե նա սկսվել
է շատ մատուղ հասակում, անհետեւանք չի անց-
նում, իհարկե: Ֆիզիքական աշխատանքը կար-
ձեն թե լավում ես յեռանդի այն պաշարը, վոր
ամբարված ես զարգացող որդանիզմում. և այդ
պաշարը յերեխային մտավոր կանոնավոր զարգաց-
ման համար այլևս չի բավարարում:

Դպրոց մտնելով, նա չի կարողանում հա-
նել իր հասակակիցներին, նրանց, վորոնք մեծա-
նում են այլ պայմաններում: Յեվ այդ ես պատ-
ճառը, վոր պրոլետար յերեխաները շատ անգամ
ավելի փոքր ընդունակությունների տեր են, ա-
վելի քիչ ուշադիր, իսկ երբեմն նվազ ջանասեր:

Զարամտորեն ուրախանում ես այդ առիթով
բուրժուազիան, ցցելով իր չաղ մատները դեպի
թվերը, վորոնք ցույց են տալի պրոլետար յերեխա-
ների հետամնացությունը: Յեվ բուրժուազիան
ամեն քայլափոխում աղաղակում ես այդ առիթով,
վոր «սեւ վոսկորը» ընդդունակ չե ուսման: Իսկ
նրա հետ գուզնթաց բուրժուական իշխանու-
թյունը որենքներ ես հրատարակում, վորոնց հի-
ման վրա «խոհարարունու յերեխաների» առաջ
փակվում են դպրոցի դռները: Ի հարկե, իշխա-
նությունն ել շատ լավ հասկանում ես, վոր այս-
պես կոչված «ծուլությունը» քողարկում ես միայն
իր հետևում հիվանդոտ հոգնածությունը, և
մատաղ, դեռ թույլ կազմվածքի ուժասպառ լի-
նելը: Բայց բուրժուազիան միշտ ոգտվում ես բու-
լոր կեղծ, քսու միջոցներով ու խաբեբայու-
թյուններով, վորպեսզի և գիտելիքները, ինչպես
քո կյանքի բոլոր բարիքները, դարձնի իր բա-
ցառիկ սեփականությունը:

Բացի այն, վոր յերեխան շատ անգամ կոր-

ցնում եւ ընդունակութիւնը դեպի մտավոր բազմա-
մատեցական զբաղմունքները, շատ խիստ ազդում ե-
նրա առաջադիմութեան վրա դեռ հետեյալ հան-
գամանքը: Պրոլետար յերեխաների մեծամաս-
նութիւնը, դպրոց մտնելով չի թողնում գործա-
րանը, միացնելով միաժամանակ եւ՝ դասերը, եւ՝
էբ մշտական աշխատանքը: Այդ պատճառով շատ
երկրներում որեւքը պահանջում եւ, վոր յերեխա-
ներին մի վորոշ ազատ ժամանակասիջոց տրվի
դպրոցական զբաղմունքների համար: Շատ ան-
գամ դրա համար ոգտագործվում են այն ընդ-
միջումները, յերբ բանվորների մի խումբ պետք
եւ փոխարինի մյուսին, եւ այդպիսով այդ դպրո-
ցական զբաղմունքները լինում են կամ առա-
վոտները, կամ երեկոները: Բայց եւ այնպէս
ուսման սխտեմն ել դրական հետեւանք չի տա-
լիս. արդեն հոգնած ու տանջված եւ այդ դրու-
թիւնը վատթարանում եւ նրանով, վոր նա
վոչ կուշտ եւ կ վոչ ել լավ հանգնված: Շատ ան-
գամ գործարանից մինչեւ դպրոց յերեխան ստիպ-
ված եւ վագել 3—4 վերստ, իսկ յերբեմն եւ ավելի:
Այդ դեպքերում նա շատ անգամ ուշանում եւ եւ
միշտ նստում եւ դպրոցում նստարանի վրա կար-
ծես ասեղների վրա, վախենալով՝ չուշանա
գործարանի գուղոկին, վորովհետեւ այդ դեպքում
նրա առաջ միշտ կանգնած եւ հայհոյանքի, տու-

գանքի, իսկ երբեմն եւ գործարանից վոնգվելու
սպառնալից ուրուականը:

Յեւ ինչպէս կարելի յե հետեւել ուսուցչին,
երբ մարմինը մորմոքվում եւ հոգնածութիւնից,
գլխում դեռ կանգնած եւ գործարանի իրարան-
ցումը, ձեռքերը կարծես ծեծվում են փայտով,
իսկ աչքերը մի անհաղթելի ուժով փակվում են
ցույց տալով յերեխայի անքնութիւնը: Տանը
նա մի բոպե ժամանակ չունի դասերը պատ-
րաստելու, կամ կարդալու համար: Այդ պատ-
ճառով ուսուցիչները շատ անգամ ընդգծում
են վոր նույնիսկ ամենաընդունակ յերեխա-
ները, վորոնք միաժամանակ բանում են գործա-
րանում, դպրոցում լուրջ չեն առաջադիմում:
Հին դպրոց, ուժգին ու համառ լցնում եր
աշակերտի գլուխը ամեն տեսակի անպետք բա-
ներով, վորոնք բոլորովին հարկավոր չեյին կյան-
քում, մինչդեռ այդ պահանջում եր հիշողութեան
ուժգին լարումն եւ թուլթակի պէս սերտում: Յեւ
այդ եւ պատճառը, վոր գործարաններում աշխա-
տող յերեխաներից մեծ մասը թողնում եր
դպրոցը առանց ուսումը վերջացնելու, կամ
արձակվում եյին դպրոցից վորպէս «անհաշոդ-
ներ»: Ու շնորհիւ մի կտոր հացի համար վարած
կովի, վոր սկսվում եւ գրեթե որորոցից, մատաղ
սրբութաբը մեծանում եւ շատ անգամ առանց

գիտութեան լույսի: Հասարակական մշուս խա-
վերի համեմատութեամբ զբաղիտութիւնը բան-
վորական շրջանում շատ անգամ զգալի կերպով
թուլլ է: Հայտնի յէ վաղուց, վոր զբաղիտութիւ-
նից ե կախված կյանքի ընդհանուր մակերևույ-
թը. վորչափ բարձր ե զբաղիտութիւնը, այն-
չափ, սովորաբար քիչ են մահացութիւնը, և
վարակիչ հիվանդութիւնները: Գիտելիքներն ա-
ռանձնապէս անհրաժեշտ են բանվոր դասակար-
գի համար: Դարերով նա տքնում ե կապիտալի
ծանր լծի տակ: Կապիտալն ուժեղ ե վոչ միայն
այն պատճառով, վոր նորա ձեռքումն ե ամբողջ
հողը, բոլոր գործարանները, զավոդները, ան-
տառները, հանքերը ու փողը, բայց գեռ ելինը-
րանով, վոր ունի աշխատավոր մասսաներին խա-
վարի սեջ պահելու միջոցը: Խավարին ու ան-
զբաղիտութեանը սովորաբար հետևում ե իր ճա-
կատագրի առաջ խոնհարվելու տրամադրութիւ-
նը. համոզմունքը, վոր տիրող, և վատ իրա-
վակարգը, նշանակված ե երկնքից, վոր կովել
ներկա ժամանակակից կյանքի կազմի գեմ՝ ան-
ոգուտ ե, իսկ գանդատվելը նույնիսկ մեղք: Մի-
այն գիտութիւնն ե, վոր պարզում ե բանվորին
ասելով, վոր աշխարհը միշտ այնպէս կառուցված
չի եղել ինչպէս այժմ և վոչ ել միշտ այնպէս,

ինչպէս այսօր: Գիտութիւնը սովորեցնում ե
նրան, վոր կապիտալը ամենակարող չե և վոր
նրա հզօրութիւնը ու իշխանութիւնն անվախ-
ճան չեն: Նա ցույց ե տալիս, վոր բանվոր դա-
սակարգը բոլոր երկրներում անխուսափելիորեն
պետք ե տապալի հացկատակների ու ձրիակեր-
ների իշխանութիւնը, և պետք ե ինքը կովե-
իր նոր, գեղեցիկ կյանքը (Ռուսաստանում այդ
ուղղութեամբ արված ե արդեն առաջին քայլը,
և բանվորութիւնը ու գյուղացիութիւնն իր կոշ-
տացած ձեռքն ե առել իշխանութիւնը): Փա-
կելով նրա առաջ գիտութեան դռները, յերե-
խայի վաղաժամ աշխատանքը միաժամանակ
մշուշապատում ե նրա գիտակցութիւնը, վորպէս
բանվորի վորդու ու դրանով ուշացնում ե այն
ցանկալի բոպէս, յերբ դարավոր շղթաները
պետք ե ջարդվեն պրոլետարիատի միացյալ հսկա
թափով և աշխարհում կը ծածանվի աշխատանքի
կարմիր դրոշակը:

Գործարանային աշխատանքի ազդեցութեան
այդ բոլոր հետևանքները փոքրահասակների
վրա վաղուց արդեն պարզ ե նրանց, ովքեր
գիտակցորեն կույր լինել չեն կամեցել: Յեւ
նույնիսկ ավելի գիտակից բուրժուազիտական-
ները, գրողներն ու քաղաքագետները, վորոնք

դեռ բոլորովին չեն ծախել իրենց Մամոնային, չեյին կարող չընդունել այդ փաստերը: Հատուկ հանձնաժողովները, դեռ անցեալ դարի սկզբում, ուսումնասիրել են անչափահասների աշխատանքի խնդիրը գործարաններում. և այդ հետազոտությունների առաջ բերած պատկերները այնչափ ցայտուն են, վոր ընթերցողի մազերը փշաքաղվում են զարհուրանքից:

Այդ պատճառով բոլոր յերկրների որհնադրությունը աշխատանքի պաշտպանության մասին սկսվում եր բազմատեսակ միջոցներ ձեռք առնել, վորոնք վերաբերվում եյին անչափահասների աշխատանքին գործարանային արդյունաբերության մեջ: Բայց շատ քիչ կարելի յելավ համարել, և մեծագույն դեպքերում վատ պետք ե համարել յերեխայի դրությունը այդ աշխատանքներում: Վերցնենք մի տղա, վոր աշակերտության ե մտել կոշկակարի մոտ, կամ մի աղջկա—վարպետուհու, վոր աշխատում ե դերձակուհու մոտ: Հեշտ չե և նրանց վիճակը ու շատ անգամ շատ լուրջ մտաւտանջվում ես թե ո՞ւմ աշխատանքն և ավելի դժվարին նրանց, թե գործարանային բանվորներինը: Տալիս ե հայրը նրանց սովորելու ինքը զնում գյուղը: Սկզբում փող նրանք բոլորովին չեն ստանում. յերբեմն նույնիսկ ծնողներն են ուղարկում «սովորելու»

վճարը: Վարպետն այդ պատճառով պահում ե նրանց վորպես մի վողորմություն կիսակքաղց, կշտամբում ե ամեն մի կտոր հացի համար, թե ե ինքը նրանցից շահվում ե ու այն ել վոչ պակաս չափով:

Աշխատում ե այստեղ խեղճ յերեխան առանց վորոշ ժամանակամիջոցի աշխատում ե այնքան, վորքան այդ պահանջում ե վարպետը, չնայած վոր, վորոշ գործ ել սովորաբար չեն տալիս նրան: Յերեխային վոչ միայն վոչինչ չեն սովորեցնում, այլ զբաղեցնում են կողմնակի գործերով: Այս կամ այն կողմն են ուղարկում, նա ծերով: Այս կամ այն կողմն են զնում, և՛ տանմիթերքների համար և՛ շուկա ե զնում, և՛ տանտիկնոջ լվածքն ե գետը տանում, ինքնայեռը պատրաստում, յերեխային որորում, հարբած վարտրաստում, յերեխային հանում, պառկեցնում, պետի շորերն ե հանում, պառկեցնում, երբ վերջինս կորցնում ե իրեն: Ամբողջ որը թշերը վերջինս կորցնում ե իրեն: Նրան պառկեցնում են մեծ դադար չունի: Նրան պառկեցնում են մեծ մասամբ հատակի վրա, գրեթե առանց անկողմասամբ հատակի վրա, գրեթե նախասնայակում: Նու և այն ել հաճախ վորեւ նախասնայակում: Քիչ դառն արտասուք չի թափում, այդ թշվառ յերեխան, ոգտվելով րոպեից և քաշվելով մի անկյուն, բացի սրանից ամբողջ որը վարպետն ե նրան հայհոյում, կինն ել մի կողմից ե նրան կշտամբում—կամ ուշացավ կանչելու, կամ այն-

պես չը մատուցեց կամ դանդաղեց, և կամ փչացրեց տպրանքը:

Յեթե վարպետին չը հաջողվեց ցանցն ողտալից գուրս քաշել, եթե մթերքները կամ ապրանքը թանգանա, եթե նրա ատամներ են ցավում, կամ իր կնոջ հետը կռվել և, պետք է մեկն ու մեկից առնել այդ բոլորի վրեժը, և այստեղ միշտ մեղավորը աշակերտն է: Հազվագյուտ են այն, դեպքերը, յերբ գործը վերջանում է միայն հայհոյանքներով: Ավելի հաճախ առաջ են գալիս հրոց աքացիներ, ապտակ, իսկ երբեմն «տաք խոսակցությունից» հետո, յերեխայի ահանջները սաստիկ կարմրում են և մի երկու օր խիստ ցավում: Մաքուր ոգ չը տեսնելով, երկար օրեր մութ և տոթ սենեակներում փակված, յերեխան այստեղ ևս կորցնում է իր առողջությունը, ինչպես և նրա զործարանային հասակակիցը: Բացի այդ, յերեխան ենթարկվում է ամեն տեսակ ծաղրի, զգում է, վոր ինքը ճորտ է, ստրուկ, մի բան, վոր այդ չափով չըգիտեն նրա ընկերները մեծ գործարաններում: Այժմ հարց տանք մեզ— ինչ անենք ուրեմն, վորպեսզի պաշտպանած լինենք մեր յերեխաների առողջությունը ու փրկենք նրանց այն կորստաբեր ազդեցությունից, վորին ենթակա յե նրանց հոգին ու կազմվածքը՝ շնորհիվ նրանց ույժից վեր աշխատանքի:

Անշատահասի աշխատանքը պաշտպանելու համար ինչ միջոցների է դիմում, մեր— խորհրդային իշխանությունը:

Աշխատանքի պաշտպանության մասին շատ գրել և այժմ էլ գրում են Անգլիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում և ուրիշ երկրներում, ուր իշխանությունն իրենց ձեռքին պահում են բուրժուական կառավարությունները: Բայց, ի հարկե, այնտեղ միայն շատ խոսում են այդ ուղղությամբ և իսկապես վոչինչ չեն անում: Ուրիշ բան անշուշտ չենք ել սպասում: Հայտնի է, վոր աշխատանքի մասին բոլոր որենքներն իշխանությունը հրատարակում է վոչ իր հոժար կամքով, վոչ էլ հոգու բարության պատճառով:

Ամեն մի որենք այդ ուղղությամբ դրվում է այն ժամանակ միայն, երբ բանվորները ըսկսում են չափից շատ վրդովվել, սահաջում են իրենց դրությունը բարվոքել, հայտարարելով բոյկոտ, գործադուլ: Այդ բոլկներին բուրժուական առերես դառնում է շատ կակուղ, և համաձայնվող: Սոված ամբոխի աղաղակները, ցայտուն կարմիր դրոշակները, վորոնք հիշեցնում են «վերջին վճռական ճակատամարտի» անխուսափելիությունը, ցնցում են գործարանատերին իսկ նրա հետևից տենդով հիվանդանում է և կառավարությունը, վորի թին ու թիկունքը

բուրժուազիան ե միայն: Յեւ բանվորական ամեն ուժեղ շարժման բռնկումն առաջ ե բերում միշտ բանվոր դասակարգի համար ավելի ետեան որենքներ: Բայց, այնուամենայնիվ, այդ ճանապարհով վոչ միայն շատ բան չի հաջողվում ձեռք բերել, այլ կապիտալիստներից պոկած զիջումներն ել շատ անկայուն են դուրս գալիս:

Բուրժուազիան, վորի մասին կարելի ե ասել—«անհանգիստ ե վորպես չաղ պատառ տեսած կատու, ե երկչոտ վորպես նապաստակ», առաջին դեպքում աշխատում ե հետ վերցնել, կամ կրճատել այդ զիջումները ե նա այդ բոլորն անում ե «իրավացի» ու անիրավ միջոցներով: Այդ որենքներով բանվոր դասակարգն ի հարկե բավարարվել չի կարող, վորովհետե նա շատ լավ ե հասկանում, վոր ուրիշի ձեռքով աշխատանքը: յերբեք լրիվ ի կատար չե անվում: Նա գիտե, վոր պրոլետար յերեխաների մասին հագացողությունը նոցա առողջությունը ու բարորությունը—կապիտալիստ պարոնների համար միանգամայն ավելորդ ու նույնիսկ ոտար գործ ե: Ամեն մի դործարանատիրոջ համար միշտ շահավետ ե շահագործել յերեխային. իսկ ձեռնարկողների ամբողջ դասին. անչափահասի աշխատանքը միջոց ե տալիս կրճատելու աշխատավարձը ու վատթարեցնելու աշխատանքի մյուս

պայմանները նույնիսկ հասակավոր բանվորներէ շրջանում:

Կապիտալիստի լուծը թոթափելով. ե բուրժուազիայի իշխանությունը վոչնչացնելով միայն, լուրջ կերպով կարելի յե ձեռք առնել փոքրահասակների աշխատանքի պաշտպանության գործը, վորովհետե միայն պրոլետարիատն ե, վոր հարադատորեն շահագրգրված ե իր երիտասարդ սերունդի առողջության գործով: Նա ստիպված ե ալլասեռումից ապահովելու իրեն, աչքի առաջ ունենալով այն, թե ինչպես ալլասեռվում ու վոչնչանում են գյուղատնտեսության մեջ վոչխարի, այծի ե այլ կենդանիների տեսակները:

Բանվորների ու գյուղացիների խորհրդային իշխանությունը—հետևում ե միայն աշխատավոր ժողովրդի շահերին, անչափահասների աշխատանքը պաշտպանելու վերաբերմամբ հրատարակել ե մի շարք դեկրետներ (որենքներ) կարգադրություններ, վորոնց նմանը չըկան աշխարհի վոչ մի յերկրում, վորովհետե վոչ մի յերկրում իշխանության գլուխը կանգնած չեն յերեխաներ իրենց կոշտացած ձեռքերով ստեղծել են աշխարհի բոլոր բարեքներն ու հարստությունը:

Այս բոլորից հետո, ինչ վոր ասված ե այս գրքույկում, անշուշտ ամեն մարդ կըհասկանա,

վոր մինչև վորոշ հասակը յերեխաներին չի կարելի աշխատանքի տալ: Տասնյակ տարիներից հետո, երբ բանվոր դասակարգը միանգամայն կրվեցստեղծի ամբողջ արդարությունը և աշխատանքը վայելքի ու ուրախության աղբյուրի կը վերածվի, այն ժամանակ գուցե կարելի կը լինի աշխատանքի կոչել ավելի վաղ: Իսկ այժմ, երբ հին բեթիմից մենք ժառանգություն ենք ստացել կեղտոտ, նեղ ու վերին աստիճանի հակառոշապահական կառուցված գործարաններ, իսկ արտադրություններից շատերը դեռ շատ թունալից են ազդում մարդու վրա, այդ անկարելի չէ:

Գործարան ուղարկել երեխային հենց հիմա, յերբ նա դեռ փոքր ինչ չի ամրացել, կը նշանակի գիտակցորեն թունավորել նրան և տոգորել գործարանային արտադրության բոլոր ստացվածքը մանկական արյունով: Բացի այդ, նախքան յերեխան անցնում և ինքնուրույն կյանքի, պետք է տալ նրան գեթ սկզբնական կրթություն, ինչպես վոր վոչ վոք զինվորին ճակատամարտ չի ուղարկի, նախքան չի զինի նրան փամփուշտներով: Վորպեսզի դպրոց հաճախելու հնարավորություն տանք նրան, չպետք է խլենք նրա ժամանակը վարձու աշխատանքի համար: Այժմյան դպրոցում մանուկը սովորում է վոչ միայն զանազան գիտություններ, այլ և ընտելանում է

աշխատանքի ևս: Նա աշխատում է հատուկ արհեստանոցներում, ազարակներում. և բացի սովորականներից կան և մի շարք հատուկ պրոֆեսիոնալ ուսումնարաններ, ուր տրվում է վորոշ պրոֆեսիաների մասնագիտական ուսում: Այս բոլոր հիմունքներով մեր որենսդրությունն արգելում է աշխատանքի առնել յերեխային մինչև 16 տարեկան հասակը: Բայց շատ հաճախ գործարանային կոմիտեներն իրենք են խախտում այդ կանոնը և ընդունում են ավելի փոքրահասակ երեխաներ ու զլխավորապես այն պատճառով, վոր այժմ սպրոտստը շատ դժվար է և շատ ընտանիքներ ծանր կացության մեջ են: Այլապես վարվել վոչ մի կերպ չի կարելի: Ստացված ոգուտը միայն կարծեցյալ է: Ժամանակից առաջ ընդունված ամեն մի յերեխայի կյանքը կը ճատվում է մի քանի տարով, նա շարունակ հիվանդանում է, վորը նույնպես եժան չի նստում: Յեվ այդ պատճառով միշտ, յերբ բազմանգամ ընտանիք ունեցող բանվորը դժվարանում է պահել նրան, չպետք է իր երեխային ուղարկել աշխատանքի բոլորան (հաշվետվության ու աշխատանքի բախշման բաժին), այլ պետք է գիմի ժողովրդական կրթության կամ սոցիալական ապահովողական կրթության կամ սոցիալական ապահովողական կրթության կամ սովորաբար, մի վոթյան բաժիններին: Այնտեղ սովորաբար, մի վոթյան միջոց են գտնում. հանձնում են նրան ապաստ

տարան, (յերեխայի տուն) ինտերնատ — ուսումնա-
նարան (ուր հագցնում ու կերակրում են), կոմ-
մունա-դպրոց, աշխատանքի արհեստանոց ու-
սումնարան և այլն: Յերբեմն դժվարին ե լինում
մի անգամից բավարարություն ստանալ բայց
և այնպես միշտ պետք ե անցնել այդ ընթացքով
և վոչ թե սեփական ձեռքով հաշմանդամ դարձ-
նել երեխային: Աշակցության համար կարելի յե
դիմել աշխատանքի տեղական տեսչին, վորին
բանվորները հատկապես ընտրում են աշխատանքի
պաշտպանության համար. կամ պետք ե դիմել
Կոմսոցիստական Յերիտասարդական Միությանը,
նա միշտ ոգնում ե ամեն մի փոքրահասակի,
վոր դուրս ե եկել բանվորական կամ գյուղական
շրջանից: Յեթե հիրավի բանվորների բոլոր յերե-
խաները չը սկսեն իրենց հերթին, ամենամատաղ
հասակում, իրենց քրտինքով հացը ձեռք բերել
ու դրա փոխարեն գնան նոր, բարենորոգ-
ված առաջին և յերկրորդ աստիճանի ուսումնա-
րանները, դպրոց — ակումբները մատաղահաս գոր-
ծարանային աշակերտության համար, կամ պրո-
ֆեսիոնալ — տեխնիկական ուսումնարանները, այն
ժամանակ պրոլետարիատը մի հաղթություն ևս
կըտանի կարեւորագույն ճակատներից մեկում:
Այն ժամանակ նա բուրժուազիայի, հարուստ և
ապահոված դասակարգի, ձեռից կը խլի գիտելիք-

ների արտոնությունը, կամ բացառիկ տիրապե-
տությունը: Նրա առաջ կըբացվեն այն աշխա-
տանքների և զբաղմունքների դռները, վորոնք
մասնագիտական լուրջ գիտելիք են պահանջում:

Բանվորները մինչև այժմ կատարվում եյին
միայն ամեն տեսակի հանձնարարական աշխա-
տանքները, իսկ բոլոր կազմակերպչական գոր-
ծերը հանձնվել եյին բուրժուական շրջանից դուրս
եկած ինտելիգենցիային: Ինժիներները, բժիշկ-
ները, ուսուցիչները, զրականագետները, գիտ-
նականները — սրանք բոլորն ել պարծեցել եյին
իրենց ինտելիգենտությամբ և ծաղրել և սեւ
վոսկոր ունեցող մարդկանց-բանվորներին, վորով-
հետև նրանք զբաղվել են ֆիզիկական կեղտոտ
ու ծանր աշխատանքներով:

Ձեռակերպել կյանքն այնպես, վոր իշխողը
աշխատանքը լինի բանվոր դասակարգին չի հա-
ջողվի երբեք, յեթե նա չը գրավե և այդ ամբու-
թյունները: Սաբոտաժիկներին այդ ամբուր դիր-
քերից դուրս քշելու համար պետք ե ունենալ
սեփական ինտելիգենցիա, արյունով և քրտինքով
կապված աշխատավոր մասսաների հետ: Պետք ե
փաստացի բանալ դպրոցի դռները բանվորների
յերեխաների առաջ, այդ դռնում ե հնարավոր
միայն այն դեպքում, երբ բոլորովին դուրս կը-

վանենք փոքրահասակի աշխատանքը գործարանից և աշխատանքի այլ կեղտոտ պաղվախներից:

Բավական չե փոքրահասակների միայն գործարաններում աշխատանքի չընդունե, նրանց վորոնց 16 տարին չի լրացել: Շատ գործարաններում, ու զավոդներում, բազմատեսակ փոքր և տնայնագործ վարպետների մոտ, առևտրական ու զբոսենյակային տիպի հաստատություններում, դեռ այժմ ել աշխատում են վաղուցվանից ընդունված բազմաթիվ երեխաներ: Յեվ մեր խընդիրն իհարկե, այն ե, վոր հեռացնենք նրանց գործարանային ձեռնարկություններից, վարպետների մոտից ու զբոսենեակներից, վորովհետև այժմյան արդյունաբերական հաստատությունները դեռևս դպրոց դառնալու միանգամայն անընդունակ են իսկ այնպես, ինչպես երազել են մեր մեծ ուսուցիչները իհարկե, կիրադործվի ապագայում:

Բայց միանգամից բոլոր փոքրահասակներին հեռացնել այդ որինակ աշխատանքից միայն որենք ի կատար ածելու համար, բոլորովին անհնարին ե: Հեռացնել փոքրիկին աշխատանքից և չըհոգալ նրա վիճակի մասին, նշանակում ե նրանց մասամբ քաղցածություն մատնել: Յեվ, վոր ավելի ե պատահում, այդ որինակ ընթացքով մենք ստիպում ենք մանուկին դուրս գալ փողոց ծխախոտ

լուցկի և նման բաներ վաճառելու ու շատ արագ բռնելու սպեկուլիացիայի սայթաքումն ուղին: Այդ պատճառով ել փոքրահասակին աշխատանքից հեռացնում ենք այն ժամանակ միայն, յերբ կարող ենք լիովին ապահովել նրա ապրուստի ու կրթության հնարավորությունը:

Այդ դժվարին աշխատանքը հնար եղածին չափ լավ կատարելու համար, յերկու տարվա ընթացքում ամբողջ Ռուսաստանում գործել են հատուկ «հանձնաժողովներ փոքրահասակներին աշխատանքից ազատելու համար»:

Հանձնաժողովի կազմի մեջ եյին մտնում բոլոր կոմիսարիատներից ներկայացուցիչներ, վորոնք հնարավորություն ունեյին մասնակցելու այդ ընդհանուր գործին, Աշխատանքի տեղական բաժանմունքները, ժողովրդական կրթության և սոցիալական ապահովության բաժանմունքները: Բացի այս բոլորից այնտեղ մտնում եյին տեղական բանվորական կյանքին լավ տեղյակ պրոֆմիտություն խորհրդի ներկայացուցիչները, բանվորա-դյուղացիական Կոմմունիստական Յերիտասարդության Միությունը, վորի շարքերում են լինվում բոլոր ավելի գիտակից պատանի պրոլետարները:

Յերեխաներին աշխատանքից նախ քան հեռացնելը (առաջին հերթին մինչև 14 տարեկան),

այդ հանձնաժողովը ճիշտ հաշվի եր առնում նրանց թիվը, հետո ուշադրութեամբ քննում եր յուրաքանչյուր երեխայի կյանքի պայմանները: Յեթե նա բոլորովին վորբ եր և ինքն եր պահպանում իր գոյութիւնը, նրան տալիս եյին ինտերնատ-դպրոց, ուր նա ապրում եր և կրթութիւն ստանում կառավարութեան հաշվին: Յեթե ընտանիքում եր նա ապրում այդ դեպքում ընտանիքի անդամների և նրա ստացած վողջ վաստակի համեմատ ապահովում եյին նրան: Յեթե անհնարին եր լինում նրան ինտերնատ տալ, այդ դեպքում ընտանիքն ստանում եր վորոշ թոշակ: Ավելի աղքատ ընտանիքներին լիովին տրվում եր փոքրիկի առաջվա աշխատավարձի քանակութեամբ նպաստ: Աշխատանքից բոլոր հեռացվացներին տալիս եյին ինչպէս ընդհանուր նուշնպէս և մասնագիտական դպրոցներ:

Բայց, ի հարկե միանգամից չհաջողվեց հեռացնել աշխատանքից բոլոր փոքրահասակներին. այս բոլորից բացի, բացառիկ դեպքերում աշխատանքի տեսուչները ստիպված են աշխատանքի թույլ տալ և նոր փոքրահասակներին, իհարկե 14 տարեկանից վոչ փոքրերին: Տասնվեց տարեկանից փոքրահասակ յերեխաների աշխատանքի համար ել սահմանված որենքով պետք ե մտցնվի 4 ժամվա բանվորական որ. մնացած ազատ ժա-

մանակամիջոցը նրանք պետք ե ոգտագործեն հնարավոր եղածի սահմանում կրթութիւն ձեռք բերելու համար, և նրա համար, վոր մտնեն իրանց կազմակերպութեան՝ յերիտասարդական միութեան մեջ, վորը կընտելացնե նրանց հասարակական աշխատանքների ու կը դաստիարակի նրանց դարձնելով պատանի կոմունիստներ, դադասակագի գիտակից զավակներ և բանվորական գործի կայուն մարտիկներ:

Բոլոր 16-ից մինչև 18 տարեկան անչափահասները պետք ե աշխատեն որեկան 6 ժամ՝ միայն և եթե նրանք որով են բանում, նրանց վճարվում ե բանվորական լրիվ որավարձ: Ի նկատի ունենալով, վոր ուժերի անչափ լարումը և հոգնածութիւնը, առանձնակի խիստ ազդում են դեռ վոչ կատարելապէս հասունացած որդանիդմին, այդ պատճառով ել անչափահասների բանվորական որը կըճատվում ե իսկ պայմանաժամից դուրս (сверхурочное) ամեն տեսակի աշխատանքները խորհրդային որենքների համաձայն արգելվում են:

Վորչափ և շահավետ չլիվա նրանց լրացուցիչ աշխատանքի համար ստացվող կրկնակի վճարը, այնուամենայնիվ անչափահասի, կամ փոքրիկի համար այդ բոլորովին անթույլատրելի յե վորովհետև նա ավելի շուտ կըվատնի իր առողջութիւնը քան փող կը վաստակի:

Այդ պատճառով փոքրիկներին և անչափահասներին արգելվում է ամեն տեսակի գիշերային աշխատանք: Մարդը վաղուց է սովորել ցիւրեկն աշխատել, գիշերը հանգստանալ: Քնի արժեքը հենց այն է, վոր մարմնից հեռացնում է այն թուլները, վորոնք ամբարվում են որդանիզմում, աշխատանքի ժամանակ: Այդ պատճառով քնից զրկվելն ազդում է ամենքին ել և այն ել շատ վնասակար կերպով: Իսկ նա վոր աշխատում է գիշերը սովորական քնով երբեք բավարար չափով չի վերականգնում իր ուշտերը: Յերեկը վոչ մի կերպ չի կարելի քնել այնպես, ինչպես, այդ պահանջվում է: Յերկար քնել դժվար է, խանգարում են լույսը ու աղմուկը: Բացի այդ, ցերեկը միշտ մեկը կը խանգարի և ամեն տեսակի դործեր ու հոգսեր թույլ չեն տալ ինչպես պետքն է հանգստանալ ու խոր քնել: Դեռ շատ վաղուց նկատվել է, վոր այն բանվորները, վորոնք աշխատում են գիշերները, աչքի են ընկնում իրենց նիհարությամբ թույլ և գունատ տեսքով: Յեւ յեթե գիշերային աշխատանքներն այդ չափ խիստ են ազդում հասակավորների վրա, ուրեմն վորքան անգամ ավելի պետք է լինի նրանց վնասակար ազդեցությունը դեռ հասունացող, փուլսր և քնքույշ որդանիզմի վրա:

Յերեխաներն ու փոքրահասակներն այսպիսով կարող են աշխատել միայն ցերեկով 4 կամ

6 ժամ, առանց արտաժամյա (сверхурочное) աշխատանքների:

Նույնիսկ այդ շրջանակներում ևս նրանց ամեն տեսակի աշխատանք չի կարելի տալ: Արդեն առաջուց խոսեցինք, վոր կան մի շարք վնասակար և վտանգալից արտադրություններ, կամ առանձին արհեստներ, ուր աշխատանքն անչափահասների համար հավասար է նրանց դանդաղ մահացության:

Առաջին հերթին պետք է հիշատակել այստեղ ստորերկրյա աշխատանքներն առանց ցերեկվա լույսի, ծանր, խեղդող ուղում, փոշու մեջ, պայթումի փրատակներում կորչելը, հանկարծակի ներս խուժող ջրերում խեղդվելը մի խոքով մահվան սպառնալիքի տակ:

Մեր որենքները կատարելապես վճռականորեն արգելում են անչափահասների ստորերկրյա աշխատանքը: Այն ինչ վերաբերվում է մյուս աշխատանքներին ուր անչափահասակներին ու փոքրահասակներին տեղ չպետք է լինի, այդ աշխատանքների ցուցակը հրատարակվում է (բոլոր արտադրությունների համար) Աշխատանքի ժողովրդական կոմիտարի այն բաժանմունքը վորը տնորինում է աշխատանքի պաշտպանության գործը:

Այդ ցուցակների խմբագրության մասնակցում է և պրոֆմիության Համառուսական կեն-

տրոնական խորհուրդը: Բայց, իհարկե ընդգրկել կյանքի բոլոր պահանջները այդ ցուցակները չեն կարող: Յեւ տեղական բոլոր գործարանային կո-
կոմիտեները, պրոֆմիությունները, աշխատանքի պաշտպանության նրանց բաժանմունքները և երիտասարդական կազմակերպությունները պետ-
ք է ամեն միջոց ձեռք առնեն անչափահասներին բոլոր ծանր և վնասակար աշխատանքներից հե-
ռացնելու, նրանց ավելի հեշտ աշխատանք հանձ-
նելու համար: Պետք է աշխատել, վոր յերեխա-
ները չըզբաղվեն տաղակալի, միակերպ, մոնո-
տոն աշխատանքով, վորը վոչինչ չի տալիս վոչ
նրանց մտքին և վոչ սրտին:

Բոլոր չափահաս բանվորներն ոգտվում են տարվա ընթացքում երկու շաբաթվա արձակուր-
դով, իսկ փոքրիկներին և 18 տարեկանից փոքր
հասակ ունեցողներին ի նկատի առնելով աշխա-
տանքի վնասակար ազդեցությունը նրանց առող-
ջության համար, տրվում է մի ամսյա արձակուրդ:

Վերջապես, ամբողջ Ռուսաստանում մաս-
նագետ բժիշկները հետազոտում են անչափահաս-
ների առողջապահական վիճակը և բոլոր հիվանդ-
ներին, կամ ավելի թուլյուններին առաջին հերթին
ուղարկում են բազմատեսակ սանատորիաներ,
հանգստի տներ, և այլն:

Այս փոքրիկ գրքույկում ես փորձեցի գծել
երեխայի, նրա աշխատանքի և առողջության
մեջ գտնված կապը:

Զե՛ վոր մեր ապագան յերեխաներն են, նը-
րանք են շարունակելու մեր սկսած գործը: Յեւ

4084
մենք պետք է ձեռք առնենք բոլոր միջոցները,
վորպեսզի մեր մատաղ սերունդը չզոհվի իր ույժից
վեր վատառողջ աշխատանքից, մենք պետք է
հոգանք, վոր հասունցած շրջանում նրանք լինեն
ամուր, ավելի թարմ, ավելի բախտավոր, քան թե
մենք ենք եղել: Սրան հասնելու համար, պետք է ճիշտ
կատարել խորհրդային Իշխանության հրատարա-
կած բոլոր դեկրետները և աշխատանքի պաշտ-
պանության բոլոր կանոնները: Նա, ով կը կարգա-
այս գրքույքը և կը հասկանա յերեխայի աշխա-
տանքի պաշտպանության միջոցների պատճառն
ու նշանակությունը, պետք է հանձնարարի այս
գիրքի էջներն իր ընկերներին, մանավանդ ավելի
հետաքննադատներին:

Բոլոր բանվորները, թե իրենք, փոքրիկները
և թե անչափահասները խնչպես և հասակավոր-
ները, յերեխաների աշխատանքի պաշտպանու-
թյան գործը ճշտորեն կյանքի մեջ կկուրելու
համար պետք է սերտ կապ հաստատեն աշխա-
տանքի տեղական վերատեսչի հետ:

խորհրդային Իշխանությունը և բանվորա-
կան կազմակերպությունները (պրոֆմիություն-
ները) մեծ պարտավորություն են դրել այդ վե-
րահսկիչների վրա: Նրանք պաշտպանելու յեն
բանվորի կյանքը, առողջությունն ու աշխա-
տանքը:

Բոլոր թյուրիմաց դեպքերում, բոլոր հար-
ցերով ու այն կարիքներով, վորոնք առնչվում
ունեն անչափահասների աշխատանքի պաշտ-
պանության հետ, պետք է դիմել այդ վերատեսչ-

չին: Նա հին չինովելիկ չե, վերելից նշանակված,
այլ նույն բանվորը, վոր իր մեջքի վրա փոր-
ձել ե ժամանակակից աշխատանքի բոլոր քաղ-
յրությունը:

Գործարաններում աշխատող երեխաները
ու անչափահասները, փորպես իրանց զասակար-
գի արժանի զավակներ, չբռնաք ե ապավինեն
միայն ուրիշի խնամակալությանը: Բանվոր յերի-
տասարդների կոմմունիստական Միության առն-
տեսական — իրավակարգային հանձնաժողովների
միջոցով, նրանք պետք ե աջակցեն ե մասնակ-
ցեն աշխատանքի պաշտպանության բոլոր զբաղ-
մունքներին: Յեվ չնայելով բոսիելի բնդհանուր ծանր
պայմաններին, մենք պետք ե հենց այժմ միա-
ցենք մեր բոլոր ջանքերը, փորպես զի հիբավի
ստեղծենք բանվոր մարտիկների նոր սերունդ,
արժանի մեծ դարագլխի, յերբ սոցիալիստական
կառուցվածքը զարձել ե արդեն կյանքի գործնա-
կան խնդիր:

Բոլոր տեղական ույժերը դեպի յերեխայի
աշխատանքի պաշտպանությունը:

Մանուկների ալլատերումը, բանվոր դասա-
կարգի բնդհանուր ալլատերման հիմքն ե, մենք
պարտավոր ենք նրա դեմ կռվելու համար գոր-
ծադրել մեր բոլոր սիջոցները:

ՀՀ Ազգային գրադարան



NL0202779

